

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2019Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ

Հրատարակվել է 11 մարտի 2020թ.

ԱՍՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ Սահմանադրության Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է, որն ունի միապալատ օրենսդիր կառույց՝ Ազգային ժողով (խորհրդարան): Կառավարությունը ղեկավարում է խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, իսկ նախագահը, որը նույնպես ընտրվում է խորհրդարանի կողմից, ունի առավելապես արարողակարգային դերակատարում: 2018թ. դեկտեմբերի արտահերթ խորհրդարանական ընտրություններում գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի ղեկավարած «Իմ քայլը» դաշինքը ստացավ քվեների 70 տոկոսը և գերակշիռ մեծամասնություն խորհրդարանում: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հովանու ներքո իրականացված միջազգային ընտրական դիտորդական առաքելության գնահատմամբ «խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ»:

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար: Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔՕ) առանձին կառույց է, որն իրականացնում է նախաքննություն պետական պաշտոնյաների հնարավոր չարաշահումների հետ կապված քրեական գործերով: Քննչական կոմիտեն պատասխանատու է ընդհանուր քաղաքացիական և ռազմական քրեական գործերով նախաքննությունների համար և ներառում է քննչական ծառայություններ: ԱԱԾ-ի և ոստիկանության ղեկավարներն ուղղակիորեն հաշվետու են երկրի վարչապետին և նշանակվում են նախագահի կողմից՝ վարչապետի առաջադրմամբ: Կառավարությունը նշանակում է ՀՔՕ-ի և Քննչական կոմիտեի ղեկավարներին՝ վարչապետի առաջադրմամբ: Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ:

Մարդու իրավունքների հետ կապված առավել նշանակալի խնդիրները ներառել են խոշտանգումներ. կամայական կալանք, թեպետ ավելի սակավ. ծանր և կյանքի համար վտանգավոր բանտային պայմաններ. կամայական միջամտություն անձնական կյանքին. նշանակալի խնդիրներ կապված դատական անկախության հետ. բռնությամբ կամ բռնության սպառնալիքներով ուղեկցվող հանցանքներ ընդդեմ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և

ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց, և երեխայի հարկադիր կամ պարտադրված աշխատանքի օգտագործում:

Կառավարությունը ձեռնարկել է քայլեր ներկա և նախկին պետական պաշտոնյաների և իրավապահ կառույցների պաշտոնյաների թույլ տված ենթադրյալ չարաշահումների քննության և նրանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Օրինակ՝ տարվա ընթացքում շարունակվել է քննվել 8 քաղաքացիական անձի և 2 ոստիկանի կյանք խլած 2008թ. հետընտրական բախումներում նախկին կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների հանցավորության հարցը:

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական ձևով կյանքից զրկելը կամ այլ անօրինական կամ քաղաքական սպանություններ

Եղել է առնվազն մեկ հաղորդում կառավարության կամ վերջինիս գործակալների կողմից կամայական կամ անօրինական սպանություն կատարելու վերաբերյալ: Հոկտեմբերի 3-ին Hetq.am-ում տեղ գտած հրապարակման համաձայն 2018թ. հունիսին կալանքի տակ գտնվող Արմեն Աղաջանյանին գտել էին կախված վիճակում «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում», ուր նա տեղափոխվել էր «Նուբարաշեն» ՔԿՀ-ից հոգեբանական գնահատում անցնելու նպատակով: Աղաջանյանի ընտանիքի անդամները հավատացած էին, որ նրան սպանել էին, որպեսզի նա մատնացույց չաներ 2018թ. մարտին՝ ՔԿՀ ընդունելու օրը, իրեն ծեծի ենթարկած աշխատակիցներին, այդ թվում մայրը Արմեն Հովհաննիսյանին, ում խոշտանգումներ թույլ տալու ու փաստաթղթեր կեղծելու մեղադրանք էր ներկայացված: Աղաջանյանի ընտանիքի անդամները պնդում էին, որ նրա մարմնի վրա եղել են բռնության հետքեր, իսկ կոյուղու խողովակը, որից նա իբր կախվել էր հունիսի 12-ին, Արմեն Աղաջանյանի հասակից ցածր էր: Ենթադրյալ ինքնասպանության ժամանակ Արմեն Հովհաննիսյանը, որին Աղաջանյանը մատնացույց էր արել որպես իրեն ծեծողներից մեկը, գտնվում էր կալանքի տակ: Նոյեմբերի 1-ի դրությամբ Աղաջանյանի մահվան գործով քննությունը շարունակվում էր, իսկ նոյեմբերի 26-ին ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Բալայանն ազատ արձակեց Հովհաննիսյանին՝ վճռելով, որ կատարվել է ոչ թե խոշտանգում, այլ տեղ է գտել պաշտոնեական լիազորությունների գերազանցում: Դատավորի որոշմամբ Հովհաննիսյանի նկատմամբ կիրառվեց 2018թ. համաներումը:

Տարվա ընթացքում լրատվամիջոցներում շարունակվում էին հաղորդումներն այն մասին, որ Պաշտպանության նախարարությունը չի տրամադրում լիարժեք տեղեկատվություն կամ չի

հաղորդում ծառայության հետ չկապված մահվան որոշ դեպքերի մասին: Մարդու իրավունքների հարցերով հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) մտահոգություն հայտնեցին Պաշտպանության նախարարության կողմից ծառայության հետ կապված մահվան դեպքերին տրվող բնորոշման և ծառայության հետ չկապված դեպքերը որպես ինքնասպանություն որակելու պրակտիկայի վերաբերյալ, որի հետևանքով բռնությունների բացահայտումն ու այդ փաստերով քնությունների անցկացումը դառնում է առավել քիչ հավանական: ՀԿ-ների հաղորդումներից հարկ է նշել, որ զինվորական մահվան դեպքերի հիմնական պատճառների շարքում ավտովթարներից հետո 2-րդ տեղում են առողջական խնդիրները, ինչը հարցեր է առաջացնում զինված ուժերում բուժծառայությունների համարժեքության և այն մասին, թե արդյոք երիտասարդ տղաները գորակոչվել են արդեն իսկ առկա լուրջ առողջական խնդիրների առկայությամբ:

Փետրվարի 11-ին լրատվամիջոցներում հաղորդում եղավ այն մասին, որ պաշտպանության նախարարությունը թաքցրել էր հունվարի 1-ին Սյունիքի մարզում ենթադրաբար ինքնասպանություն գործած պայմանագրային ծառայող Էդգար Գրիգորյանի մահվան փաստը: Փետրվարի 1-ին պաշտպանության նախարարն արձագանքեց լրատվամիջոցներին՝ նշելով, որ մահն առնչություն չի ունեցել զինվորական ծառայության հետ և այդ պատճառով դրա մասին հաղորդում չի եղել: Համաձայն Գլխավոր դատախազության տեղեկատվության Գրիգորյանը հարբած վիճակում սպառնացել է մարտական դիրքում տեղամասի ավագ սպային, ապա հրագենից կրակել ինքն իր վրա՝ կրծքավանդակի շրջանում: Գրիգորյանի ընտանիքը չի ընդունում այս վարկածը: Գրիգորյանի մահվան դեպքի քնության արդյունքում վեց զինվոր ենթարկվել են կարգապահական տույժի: Քնությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Բանակում ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների ընտանիքների պահանջներին ի պատասխան կառավարությունը ձևավորեց ՀԿ-ներից և փորձագետներից կազմված աշխատանքային խումբ, որը դիտարկելու էր 5 դեպք և վերհանելու համակարգային խնդիրները: Խումբն իր գործունեությունը սկսեց 2018թ. նոյեմբերից: Մի քանի ամսից անդամներից մի քանիսը դուրս եկան խմբից՝ իրենց դժգոհությունը հայտնելով դեպքերի վերաբերյալ նյութերի հասանելիության վերաբերյալ: Մյուս ՀԿ-ները սակայն շարունակեցին աշխատանքը խմբում՝ նշելով Քննչական կոմիտեի հետ լավ համագործակցության մասին, և 2 ՀԿ Կոմիտեին ներկայացրեցին իրենց դիտարկումները քնությունների ընթացքում բացահայտված թերությունների մասին: Տարեվերջի դրությամբ Քննչական կոմիտեն ուսումնասիրում էր այդ դիտարկումները:

Հոկտեմբերի 10-ին կառավարությունը հաստատեց Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ազգային ծրագիրը: Ռազմավարությամբ նախատեսվում է փաստահավաք

խմբի ձևավորում, որն ի թիվս մարդու իրավունքների այլ ոտնահարումների կուսումնասիրի բանակում գրանցված ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերը:

Հուլիսի 8-ին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ը զինված ուժերում մարդու իրավունքների մասին իր հերթական կիսամյակային զեկույցում նշել էր, որ առաջին անգամ զինծառայողների մարդու իրավունքների պաշտպանությունը ձևակերպվել է որպես ներկազմակերպական առաջնահերթություն պաշտպանության նախարարության կողմից: Հուլիսի 24-ին պաշտպանության նախարարությունը գործարկեց «վստահության հեռախոս», որին կարող են զանգել զինծառայողները և հնչեցնել իրենց բողոքները, դիմել օգնության համար և ներկայացնել իրենց առաջարկները:

Սեպտեմբերի 12-ին մեկնարկեց նախկին պաշտոնյաների դեմ մեծ հնչեղություն ունեցող գործով դատավարությունը՝ կապված 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած բողոքի ցույցերը ցրելու նպատակով զինված ուժերի ներգրավման հետ, որի ընթացքում զոհվել էին 8 քաղաքացիական անձ և 2 ոստիկան: Այս և հարակից քրեական գործերով ներկայացված են սահմանադրական կարգը տապալելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու և անցնելու, խոշտանգումների, կաշառքի հարցում հանցակցելու, պաշտոնական խարդախության և 2008թ. հետընտրական դեպքերի հետ կապված ապացույցները կեղծելու մեղադրանքներ: Այս գործերով կասկածյալ համարվող հայտնի դեմքերից են նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանը, պաշտպանության նախկին փոխնախարար Յուրի Խաչատուրովը, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը, նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Արմեն Գևորգյանը, նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը, նախկին գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը և ուրիշներ: Հուլիսի 27-ին Քոչարյանին 2008թ. դեպքերի հետ կապված մեղադրանք ներկայացվեց սահմանադրական կարգի տապալման և ցույցերը բռնի ուժով ցրելու համար: Ոստիկանության նախկին հրամանատարի տեղակալ Գեղամ Պետրոսյանին մեղադրանք առաջադրվեց ցույցերի ճնշման ընթացքում Զաքար Հովհաննիսյանին սպանելու համար:

Հունվարի 29-ին Մարդու իրավունքների հարցերով Եվրախորհրդի հանձնակատար Դունյա Միլատովիչն իր զեկույցում, որտեղ ամփոփել էր 2018թ. սեպտեմբերին երկիր կատարած իր այցը, նշեց, որ կառավարությունը քայլեր է ձեռնարկել 2008թ. մարտին տեղի ունեցած բռնարարքների մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Զեկույցում նշվում էր, որ կարևոր է այս գործընթացն անցկացնել զգուշաբար՝ «իրավունքի գերակայության, դատական իշխանության անկախության, թափանցիկության և արդար դատաքննության երաշխավորման սկզբունքների խստիվ պահպանմամբ»՝ բացառելու վրեժի քաղաքականության կամ ընտրովի արդարադատության ցանկացած մեղադրանք:

Հունիսի 4-ին խորհրդարանն ընդունեց 2008թ. մարտի հետընտրական բռնություններից տուժած անձանց աջակցություն ցուցաբերելու մասին օրենք, իսկ սեպտեմբերի 5-ին

կառավարությունը 720 միլիոն ՀՀ դրամ (1,5 միլիոն ԱՄՆ դոլար) տրամադրեց տուժողներին ու նրանց ընտանիքի անդամներին աջակցելու համար:

Անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակել են վերահսկել Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և յոթ հարակից ադրբեջանական տարածքներ: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը շարունակում է մնալ միջազգային միջնորդական ջանքերի օրակարգում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում, որտեղ համանախագահում են Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Խախտումները շփման գծում շարունակվել են, սակայն նախորդ տարիների համեմատ ավելի քիչ են եղել: Կրկնվող կրակոցների հետևանքով եղել են մահվան դեպքեր, հիմնականում զինձառայողների շրջանում: 2016թ. բախումների ալիքից հետո հակամարտության կողմերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (ՄԻԵԴ) բողոքներ են ներկայացրել, որտեղ միմյանց մեղադրում են վայրագություններ թույլ տալու մեջ: ՄԻԵԴ-ում գործերը դեռևս ընթացքի մեջ են:

բ) Անհետացումներ

Իշխանությունների կողմից կամ անունից անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

Ըստ ոստիկանության տվյալների Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված 867 հոգի համարվում է անհայտ կորած: Կարմիր խաչի միջազգային կոմիտեն մշակել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ պայմանավորված անհայտ կորածների մասին տվյալները և աշխատել է կառավարության հետ՝ անհայտ կորածների ընդհանուր ցանկը մշակելու շուրջ: Ըստ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ հակամարտության հետևանքով անհայտ կորել են մոտ 4500 հայ և ադրբեջանցի:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Սահմանադրությունն ու օրենսդրությունն արգելում են նման գործելակերպերը: Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչներն արգելանքի տակ գտնվող անձանց շարունակել են ենթարկել խոշտանգումների կամ թույլ են տվել այլ ոտնձգություններ: Ըստ իրավապաշտպանների, չնայած քրեական օրենսգիրքը սահմանում և քրեականացնում է խոշտանգումը, համապատասխան դրույթները չեն քրեականացնում անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը: Խոշտանգումներ թույլ տված պաշտոնյաների դատապարտման դեպքեր չեն եղել: Ըստ կառավարության վիճակագրության 2015թ.-ից՝ քրեական օրենսգրքով խոշտանգումների նոր սահմանումն ընդունելուց հետո, դատախազությունը խոշտանգումներ կատարելու մեղադրանքով երեք գործ է ներկայացրել դատարան, որոնցից մեկն արդարացվել է և գտնվում է բողոքարկման փուլում: Երկրորդ գործով խոշտանգումների կատարման մեղադրանքը վերադրակվել է

պաշտոնական լիազորությունները գերազանցելու մեղադրանքի: Երրորդ գործը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Ըստ մարդու իրավունքների ակտիվիստների ոստիկանական անպատժելիությունը նախկին բռնությունների դեպքերի հետ կապված նպաստում է, որպեսզի խնդիրը շարունակվի, չնայած ավելի քիչ ծավալներով, քան մինչ 2018թ. «Թավշյա հեղափոխությունը»: Ավելին, դիտորդները այս գործերով մեղավորներին չպատժելը բացատրում էին այն հանգամանքով, որ 2018թ. քաղաքական անցումից հետո իրավապահ մարմիններում բացի ղեկավար կազմից անձնակազմի այլ փոփոխությունների չեն եղել: Պաշտոնական աղբյուրները նշում էին, որ Երևան քաղաքի մի քանի ոստիկանական բաժիններում և Ոստիկանության քրեական հետախուզության վարչությունում կազմն ամբողջովին փոխվել է, սակայն դրանք բացառություններ էին: Օրինակ՝ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ՄԻԵԴ-ի չորսը տարի առաջվա արդար դատաքննության իրավունքի ու խոշտանգումների արգելման իրավունքի խախտումներն արձանագրող որոշումից հետո որևէ մեկը տարեվերջի դրությամբ դեռևս պատասխանատվության չէր ենթարկվել 2004թ. սպանության գործի քննության ընթացքում Նալբանդյանի ընտանիքին խոշտանգումների ենթարկելու համար: Մայիսի 13-ին Epress.am անկախ լրատվականում հրապարակված հոդվածի համաձայն խոշտանգումների գործը 2017թ. վերաբացվել էր, սակայն ավելի ուշ դատախազությունն այն կարճել էր՝ չնայած ՄԻԵԴ-ի որոշմանը և այն հանգամանքին, որ Նալբանդյանն անվանական մատնացույց էր արել իր նկատմամբ բռնություններ գործադրած անձանցից երեքին. Վարդան Հարությունյանին, որը 2004թ. դատախազի օգնական էր, ապա դարձել էր Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, գործը վարող քննիչ Գագիկ Հովսեփյանին և Ոստիկանության Վարդենիսի բաժնի նախկին պետ Վիկտոր Հակոբյանին:

Եղել են հաղորդումներ ոստիկանական բաժանմունքներում տեղի ունեցող բռնությունների մասին, քանի որ դրանք, ի տարբերություն բանտերի կամ ձերբակալվածների պահման վայրերի, չեն վերահսկվում հասարակական դիտորդների կողմից: Քրեական արդարադատության մարմինները շարունակել են դատապարտումների համար հիմք ընդունել խոստովանություններն ու հարցաքննությամբ ձեռք բերված տեղեկությունները: Ըստ իրավապաշտպան-փաստաբանների ոստիկանության հարցաքննությունների ժամանակ վատ վերաբերմունք թույլ չտալու համար չեն եղել բավարար ընթացակարգային երաշխիքներ, օրինակ՝ ուժով կամ ընթացակարգային խախտմամբ ձեռք բերված իրեղեն ապացույցների անընդունելիությունը:

Ապրիլի 8-ին սոցիալական հարթակներում հաղորդում եղավ, որ Երևանի բնակիչ Էդգար Ծատինյանը մահացել էր հիվանդանոցում, ուր նա տեղափոխվել էր Երևանի ոստիկանության Նոր Նորքի բաժնի բերան ենթարկվելուց հետո: Ըստ Ծատինյանի ընտանիքի պնդումների ոստիկանները ծեծի էին ենթարկել նրան՝ սպանության խոստովանություն կորզելու համար:

Երբ Ծատինյանը հրաժարվել է, իրավապահները ենթադրաբար նրան ասել են, որ թմրամիջոցներ պահելու մեղադրանք կներկայացնեն, որից հետո Ծատինյանը կուլ է տվել երեք գրամ մետամֆետամինը, որի միջոցով իրավապահները մտադիր էին մեղադրանք ներկայացնել նրան: Ծատինյանը հիվանդանոցում մահացավ թմրամիջոցների գերդոզավորումից: Դատաբժշկական փորձաքննությամբ նրա ստամոքսում հայտնաբերվեցին պոլիէթիլենային տոպրակներ, արյան մեջ հայտնաբերվեց թմրադեղ, իսկ մարմնին առկա էին վնասվածքներ: Ապրիլի 15-ին ՀՔԾ-ը քննություն սկսեց խոշտանգումների վերաբերյալ, որը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Ոստիկանության ներքին գորքերի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Երանոսյանին 2018թ. ապրիլին ցուցարարների նկատմամբ բռնություններ կիրառելու ընթացքում իր ունեցած դերակատարման համար առաջադրվել է մեղադրանք պաշտոնեական լիազորություններն անցնելու համար, որը գուգորդվել է բռնություն գործադրելով և առաջացրել է ծանր հետևանքներ: Երանոսյանի գործով դատաքննությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

2018-ի մայիսին ՀՔԾ-ն մեղադրանք է առաջադրել ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցորդ գումարտակի հրամանատար Արմեն Ղազարյանին խոշտանգումների համար՝ վեճի ընթացքում «Մասնա ծոեր» զինված խմբավորման չորս անդամներին ոստիկանության կողմից բռնությունների ենթարկելու իր դերակատարման համար: Բռնության հետևանքով ամբաստանյալների մոտ կտրվածքներ և կապտուկներ են եղել դեմքի, գլխի, որովայնի, մեջքի և ոտքերի հատվածում: Տարեվերջի դրությամբ քննությունը ընթացքի մեջ էր:

Զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների մասշտաբների և դրանք խոշտանգում համարելու մասին հաղորդումներ չեն եղել: Հունվարի 8-ին Վճռաբեկ դատարանը ճանաչեց զորակոչիկ Արթուր Հակոբյանի խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտումը: Հակոբյանը զորակոչվել էր 2015թ., սակայն ծառայությունից շուտ էր արձակվել մտավոր խնդիրների պատճառով: Ըստ նրա ընտանիքի անդամների և փաստաբանի՝ մինչ զորակոչվելը նա հոգեկան առողջության խնդիրներ չի ունեցել, սակայն խոշտանգումների ու բռնությունների հետևանքով խորը հոգեբանական տրավմա է ապրել: Հակոբյանը նշում է, որ բռնություն կիրառվել է գումարտակի հրամանատար մայոր Զիվան Մկրտչյանի կողմից: Ըստ Հակոբյանի փաստաբանի Վճռաբեկ դատարանի որոշումից հետո ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժինը, որը նախկինում թերացել էր բռնության հաղորդման հիման վրա քննություն իրականացնել, վերաբացեց գործը որպես զինվորական հանցագործություն (ծեծի ու անմարդկային վերաբերմունքի հատկանիշներով), սակայն ոչ որպես խոշտանգումներ թույլ տալու գործ: Արդյունքում դատախազությունը մերժեց գործի փոխանցումը ՀՔԾ-ին՝ մարմնին, որ զբաղվում է խոշտանգումների գործերի քննությամբ: Մայիսին Քննչական կոմիտեն կարճեց գործը՝ ապացույցների բացակայության հիմքով, սակայն որոշումը բողոքի արդյունքում

հոկտեմբերին բեկանվեց: Գլխավոր դատախազությունը բողոքարկեց քննություն պահանջելու վերաբերյալ դատարանի որոշումը:

2018թ. մարտին ՄԻՊ գրասենյակը ներկայացրեց արտահերթ զեկույց հոգեբուժական հաստատությունների իրավիճակի վերաբերյալ արձանագրելով մարդու իրավունքների խախտումներ: Բացթողումները ներառում էին. հարկադիր բուժման հետ կապված իրավական բացեր, խնդիրներ կապված ժամկետանց դեղորայքի հետ, զսպման միջոցների անհարկի կիրառում, անհետաձգելի հոգեբուժական հիվանդանոցային բժշկական օգնության բացակայություն, գերբնակեցում, խտրականություն, ոչ համարժեք կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմաններ, ոչ պատշաճ սնունդ և այլն:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Բանտային պայմանները բնութագրվում էին վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժապասարկմամբ և քրեական ենթամշակույթի հիերարխիկ օղակների («օրենքով գողեր») գերիշխող դիրքով. տարվա ընթացքում կոռուպցիայի վերացման հարցում կառավարությունը որոշ առաջընթաց է ունեցել. քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը բանտերի մակարդակում այլևս խնդրահարույց չէր, բայց դեռևս առկա էր խցերի մակարդակում: Որոշ դեպքերում պայմանները խիստ ծանր էին և կյանքի համար վտանգավոր:

Ֆիզիկական պայմաններ. Ըստ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի (ՀԴԽ)՝ տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում տեղի ունեցած վերանորոգումները բանտարկյալների համար նշանակալի բարելավումների չեն հանգեցրել: Սեպտեմբերի 5-ին արդարադատության նախարարը, որն այդ պաշտոնին էր նշանակվել հունիսին, «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պայմանները բնութագրեց որպես անմարդկային, հատկապես՝ առաջին հարկում:

Իրավապաշտպան դիտորդները և ՀԴԽ-ը շարունակել են մտահոգություններ հնչեցրել «Արմավիր» ՔԿՀ-ի ֆիզիկական պայմանների մասին: Այստեղ չկար ո՛չ օդափոխության, ո՛չ հովացման համակարգ: ՀԴԽ դիտորդները, որոնք այցելել էին այդ ՔԿՀ 2018թ. հուլիսին, արձանագրել էին, որ խցերի ներսում օդի ջերմաստիճանը 113⁰ էր ըստ Ֆարենհայտի: Ճարտարապետական նախագծով նախատեսված օդափոխության ու հովացման համակարգը, ըստ ՀԴԽ-ի, հանվել է սկզբնական նախագծից միջոցների սղության պատճառով:

Ըստ ՀԴԽ-ի քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալների մահվան հետ կապված անպատժելիությունը շարունակում էր մնալ մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներից: Հիվանդության պատճառով գրանցված մահերի դեպքում չէին կատարվում քննություններ հանգամանքները պարզելու համար, օրինակ՝ արդյոք հիվանդությունը ձեռք է

բերվել անազատության մեջ գտնվելու ընթացքում, կամ արդյոք այն կարող էր կանխարգելվել կամ բուժվել: Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում մահացել է 15 բանտարկյալ, նույնքան որքան 2018թ. նույն ժամանակահատվածում:

Հունվարի 26-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 44-օրյա հացադուլից ինն օր անց մահացավ «Հայոց արժիվներ. միասնական Հայաստան» կուսակցության փոխնախագահ Մհեր Եղիազարյանը. Նա նաև haynews.am լրատվական կայքի պատասխանատուն էր: Ըստ ՔԿՀ-ի ղեկավարության Եղիազարյանը մահացել էր սրտամկանի ինֆարկտից: Նրա պաշտպանը սակայն «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցի ժամանակ նշել էր, որ հացադուլից անմիջապես հետո հիվանդանոց տեղափոխվելու դեպքում իր պաշտպանյալը չէր մահանա և հավելել, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժմասում Եղիազարյանին համարժեք բուժօգնություն չէր ցուցաբերվել: Ըստ ՄԻՊ գրասենյակի Եղիազարյանը սրտի քրոնիկ հիվանդություն ուներ: ՄԻՊ գրասենյակը նշել է, որ գրասենյակն իրավապահներին կոչ է արել նրան գրավով ազատ արձակել՝ հաշվի առնելով այդ հանգամանքը: Հունվարի 16-ին երևանյան դատարանը մերժել է գրավով ազատ արձակելու միջնորդությունը: Եղիազարյանի մահվան փաստով կառավարությունը սկսել էր քննություն, որը տարեվերջին դեռ ընթացքի մեջ էր:

ՄԻՊ գրասենյակը և ՀԴԽ-ը մատնանշում էին քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը: Ըստ ՀԴԽ-ի կար հաստիքային հոգեբանների սակավություն, մինչդեռ հարյուրավոր բանտարկյալների անհրաժեշտ էր հոգեբանական աջակցություն: Ըստ ՀԴԽ-ի՝ ինքնավնասման ու ինքնասպանության բազմաթիվ դեպքեր հենց հոգեբանական աջակցության բացակայության հետևանք են: ՀԴԽ-ի կողմից հրապարակված վիճակագրության համաձայն 2011-2017թթ. քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է ինքնասպանության 27 դեպք: Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ՔԿՀ-ներում գրանցվել է ինքնավնասման 446 դեպք, իսկ 2018թ.գրանցվել էր 612 դեպք: 2019թ. ընթացքում ամենաշատ ինքնավնասման դեպքերը գրանցել են «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ներում: Սեպտեմբերի 4-ին լրատվամիջոցներում հրապարակում եղավ, որ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը 2 անգամ մերժել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի դիմումը՝ թույլատրելու հոգեբանների այցելություն ցմահ ազատազրկման դատապարտվածներին: Նախարարությունը պատճառաբանում էր, որ հոգեբանական աջակցությունը չի հանդիսանում բուժծառայություն: Hetq.am-ում հոկտեմբերի 19-ին ներկայացած հրապարակման համաձայն երկրի 12 ՔԿՀ-ներում աշխատող հոգեբանների թիվը եղել է 17-ը:

Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների բանտային կյանքում գերիշխել է կազմակերպված հիերարխիկ քրեական կառուցակարգ: Ըստ դիտորդների, այդ թվում՝ ՄԻՊ-ի քրեակատարողական հիմնարկների պաշտոնյաները լիազորություններ են տվել բանտային ոչ ֆորմալ հիերարխիայի վերևում գտնվող բանտարկյալների շարքից որոշ ընտրյալների

(կոչվում են «նայողներ») և օգտագործել նրանց բանտարկյալների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով: Այս իրավիճակին հանգեցրել ու այն առավել սրել են ՔԿՀ-ների անձնակազմի համալրվածության լուրջ բացերը: 2018թ. դեկտեմբերին ՄԻՊ գրասենյակը ներկայացրեց Քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգը, որտեղ առաջ էին քաշված մի շարք համալիր գործողություններ քրեակատարողական հիմնարկներում «գուլագանման» ենթամշակույթը վերացնելու ուղղությամբ:

Ըստ արդարադատության նախարարության պաշտոնյայի՝ կազմակերպված և հիերարխիկ հանցախմբերի հանդեպ կառավարությունը գրոյական հանդուրժողականության քաղաքականություն է իրականացնում:

Նոյեմբերի 28-ին կառավարությունը հաստատեց քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թթ. ռազմավարությունն ու միջոցառումների ծրագիրը: Ռազմավարությամբ նախատեսվում են խոշոր բարենորոգումներ քրեակատարողական հիմնարկներում, այդ թվում՝ կապիտալ վերանորոգումներ, վատ պայմաններով ՔԿՀ-ների, այդ թվում՝ «Նուբարաշենի» փակում և բանտերի կառուցում: Ռազմավարությունը նաև նախատեսում է պայքար ընդդեմ կոռուպցիայի և քրեական ենթամշակույթի, ինչպես նաև ջանքեր միտված բանտարկյալների վերասոցիալականացմանը:

Նախկին բանտարկյալները և բազմաթիվ իրավապաշտպան դիտորդներ առաջ են քաշել քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիայի և կաշառքների խնդիրը: Ըստ ՀԴԽ-ի քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիան արմատախիլ անելու ամենավերին օղակների քաղաքական կամքը դեռևս ինստիտուցիոնալ փոփոխությունների տեսք չի ստացել: Թեպետ կոռուպցիան ու կաշառքն այլևս համակարգային խնդիր չէին, սակայն շարունակում էին տեղ գտնել: Օրինակ՝ սեպտեմբերի 18-ին կաշառք վերցնելու մեղադրանքով ձերբակալվեց «Կոշ» ՔԿՀ-ի պետ Լյովա Բաղդասարյանը:

Քրեակատարողական հիմնարկների բուժառայություններում շարունակվում էին պահպանվել կադրային ոչ լիարժեք համալրման, տեխնիկական զինվածության անբավարար մակարդակի և նեղ մասնագիտական բուժօգնության հասանելիության հետ կապված խնդիրները: Նաև արձանագրվել է դեղորայքի լուրջ պակաս: ՀԴԽ-ի կողմից քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են խնդիրներ կապված բուժօգնության հասանելիության, ժամանակին ապահովելու և որակի հետ կապված, չնայած իրականացվել են ծրագրեր այս բացերը շտկելու ուղղությամբ:

Քրեակատարողական հիմնարկներում չկային հարմարություններ հաշմանդամություն ունեցող բանտարկյալների համար:

Ըստ ՀԴԽ-ի և այլ իրավապաշտպան կազմակերպությունների՝ բանտերում ամենավատ պայմաններում գտնվել են ԼԳԲՏԻ անձինք: Քրեակատարողական հիմնարկների

ղեկավարությունը վերահաստատում և հանդուրժում էր ոտնձգություններով ուղեկցվող վերաբերմունքը և ԼԳՖՏԻ անձանց պահում առանձնացված խցերում, որտեղ պայմանները զգալիորեն ավելի վատ էին: ՀԴԽ-ը փաստում էր, որ նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող տղամարդիկ, կամ նրանց հետ կապ ունեցողները և այն բանտարկյալները, որոնք դատապարտված են այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, ինչպես նաև նրանք, ովքեր հրաժարվում են ապրել «բանտի չգրված օրենքներով», պահվել են մյուս բանտարկյալներից առանձին և ստիպված են եղել կատարել նվաստացնող աշխատանք, ինչպիսին է սանհանգույցների մաքրումը, մյուսների աղբը հավաքելն ու սեռական ծառայությունների մատուցումը: Այդ բանտարկյալների սպասքը և ուտելիքի պատրաստումն առանձնացված էր, նրանք ունեին առանձին լվացքի մեքենա, և անգամ առանձին պատժախույց: Hetq.am-ում ապրիլի 10-ին տեղ գտած հրապարակման համաձայն, որտեղ ԼԳՖՏԻ անձինք մանրամասնում էին կյանքը քրեակատարողական հիմնարկում, նշվում էր, որ եթե անձը քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս չի հայտնում ԼԳՖՏԻ լինելու մասին, ապա այդ փաստը բացահայտվելու դեպքում խցում նրան սպասում են բռնության սուսկալի դրսևորումներ:

Վարչաբարություն. Համապատասխան մարմինները կանոնավոր կերպով չեն կատարել վստահելի քննություններ, և ոչ էլ ձեռնարկել են բովանդակալի քայլեր՝ լուծումներ տալու բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքի, բանտարկյալների միջև վեճերի ու բռնության և համատարած կոռուպցիայի խնդիրներին:

Դատապարտյալներն ու կալանքի տակ գտնվողները միշտ չէ, որ ապահովվում էին տեսակցությունների ողջամիտ հնարավորություններով՝ տեսակցության համար հարմար տարածքների բացակայության հետևանքով: Փետրվարի 11-ին Սահմանադրական դատարանը՝ արձագանքելով Մարդու իրավունքների պաշտպանի դիմումին, պատժախցում գտնվող կալանավորված անձանց ու դատապարտյալների արտաքին աշխարհի հետ կապը սահմանափակող իրավական պահանջները ճանաչեց հակասահմանադրական:

Անկախ մոնիտորինգ. Կառավարությունն ընդհանուր առմամբ թույլատրել է տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեին իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մոնիտորինգ, և նրանք դա կանոնավոր կերպով իրականացրել են: Իրավասու մարմինները դիտորդներին թույլատրել են առանձնագրույցներ ունենալ բանտարկյալների հետ և թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ: 2017թ. առողջապահության նախարարը ձևավորեց քաղաքացիական հասարակության խումբ, որն իրականացնելու էր հոգեբուժական հաստատությունների մոնիտորինգ:

Ներքին անկախ մոնիտորինգի հետ կապված, այնուհանդերձ, կային սահմանափակումներ: Արդարադատության նախարարությունը շարունակում էր մերժել ՀԴԽ դիտորդների մուտքը

կալանքի տակ գտնվող որոշ անձանց մոտ, որոնց հետ կապված քննություն իրականացնող մարմինը հաղորդակցության սահմանափակման պահանջ էր առաջ քաշել: ՀԴԽ-ը նաև զրկված էր այդ անձանց մեկուսացման պայմանները ստուգելու հնարավորությունից: ՀԴԽ-ն այս սահմանափակումները համարում էր կամայական և կարծում էր, որ քննություն իրականացնող մարմնի որոշումները չպետք է վերաբերվեն ՀԴԽ-ին:

Չնայած վաղաժամկետ արձակման ծրագրում 2018թ. կատարված փոփոխություններին, որով վերացվեցին անկախ հանձնաժողովները և վաղաժամկետ արձակման մասին որոշումների ընդունում փոխանցվեց դատարաններին՝ քրեակատարողական հիմնարկի և պետական պրոբացիոն ծառայության առաջադրամաբ, դիտորդները շարունակում էին խնդիրներ տեսնել, այդ թվում՝ կամայականություն որոշումների ընդունման հարցում: ՀԴԽ-ը խնդիրներ էր տեսնում կապված վաղաժամկետ արձակման հստակ չափանիշների, ինչպես նաև բանտարկյալների համար գոյություն ունեցող չափանիշներին հետևելու հնարավորությունների բացակայության հետ:

Դրական տեղաշարժեր. Տարեվերջի դրությամբ ոստիկանությունը պիլոտային ծրագրով տեսախցիկներ և ձայնագրման սարքեր էր տեղադրել 10-ը մարզային ոստիկանական բաժինների և Երևանի ոստիկանության ձեռքակալված անձանց պահման կենտրոնի մուտքի և ելքի կետերում:

ՀԴԽ-ի հաղորդամբ բարելավել է քրեակատարողական հիմնարկների ջրամատակարարումը: 2018թ. դեկտեմբերին կառավարությունը 270 միլիոն ՀՀ դրամ (556.000 ԱՄՆ դոլար) հատկացրեց արդարադատության նախարարությանն ուղղիչ հիմնարկությունների վերանորոգման նպատակով: Սեպտեմբերի 5-ին կառավարությունը հավելյալ 176,7 միլիոն ՀՀ դրամ (370.000 ԱՄՆ դոլար) հատկացրեց «Նուբարաշեն», «Աբովյան», «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկներում և Դատապարտյալների հիվանդանոցում ջրի ու կոյուղու համակարգերի նորոգման ու բանտարկյալների բնակության պայմանների բարելավման համար: Հուլիսի 29-ին արդարադատության նախարարության կողմից ՀԴԽ-ին տրամադրած տեղեկությունների համաձայն հունվարից սկսվել են վերանորոգման աշխատանքներ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ նորոգելու սանհանգույցները, արտաքին ու ներքին ջրամատակարարման համակարգերը, ներքին ջրահեռացման համակարգը և էլեկտրասնուցման համակարգը: Ըստ նախարարության այս վերանորոգումները բանտարկյալների հրատապ խնդիրները կարգավորելու համար անհրաժեշտ միջանկյալ լուծում էին՝ մինչև նոր քրեակատարողական հիմնարկի կառուցումը. որոշ հասարակական կազմակերպություններ փորձագետներ այս ծախսերը հարցականի տակ էին դնում:

Ըստ արդարադատության նախարարության և քրեակատարողական ծառայության զեկույցի տարվա ընթացքում ավարտվել կամ ընթացքի մեջ են եղել հետևյալ բարենորոգումները. «Արմավիր» ՔԿՀ-ի տեսակցության 8 սենյակների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին. «Աբովյան» ՔԿՀ-ում և դատապարտյալների հիվանդանոցում արտաքին

կոյուղու համակարգի, սանհանգույցների ու ցնցուղարանների նորոգումը, այդ թվում շարժունակության սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներն ու ցնցուղարանները. «Կոշ» ՔԿՀ-ի ճաշարանի նորոգումը և «Հրագրան» ու «Նուբարաշեն» ՔԿՀ-ների արտաքին կոյուղու համակարգի նորոգումը:

Մեկ այլ ուղղությամբ էլ արդարադատության նախարարության իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը «Աբովյան», «Նուբարաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ներում վերսկսել է 19-ը տարին չլրացած բանտարկյալների համար միջնակարգ կրթությունն ապահովելու ծրագիրը: Քրեակատարողական հիմնարկներում միջնակարգ կրթությունն ապահովելու պահանջը կասեցվել էր 2015թ.:

Քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող սննդի որակը բարելավելու նպատակով արդարադատության նախարարությունը սննդի ապահովումն արտապատվիրակելու պիլոտային ծրագիր է իրականացնում: 70-օրյա պիլոտային այս ծրագիրն իրականացվում է «Նուբարաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ներում և իրականացումը սկսվել է համապատասխանաբար հոկտեմբերի 15-ից և 16-ից:

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը և սահմանվում ձերբակալության կամ կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու իրավունք յուրաքանչյուրի համար: Նախորդ տարիների համեմատ տարվա ընթացքում ավելի սակավ են եղել կամայական ձերբակալությունների մասին հաղորդումները:

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ ձերբակալել անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց իրենց բերման ենթարկելու կամ ձերբակալելու պատճառների, ինչպես նաև լռություն պահպանելու, փաստաբան ունենալու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու նրանց իրավունքների մասին: Գործում է գրավով ազատ արձակելու տարբերակ: Ըստ իրավապաշտպան փաստաբանների «Թավշյա հեղափոխությունից» անմիջապես հետո դատարաններն ավելի քիչ էին կիրառում նախնական կալանքը և առավել հակված էին կիրառել խափանման այլ միջոցներ, օրինակ՝ գրավով ազատ արձակել և ստորագրություն

վերցնել երկրից չբացակայելու մասին: Մակայն տարվա ընթացքում դիտորդները նկատել են, որ դատարաններն ավելի ու ավելի շատ են վերադառնում նախնական կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և փախուստի չդիմելու ու գործի քննությանը չխոչընդոտելու ապացուցողական բեռը կասկածյալին թողնելու նախկին գործելաոճին: Ըստ կառավարության վիճակագրության տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ընդհանուր իրավասության դատարանները մերժել են կալանքի կամ կալանքի երկարաձգման միջնորդագրերի համապատասխանաբար 10 և 3,5 տոկոսը, մինչդեռ 2018թ. նույն ժամանակահատվածում մերժումները կազմում 4,4 և 16,7 տոկոս: Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ընդհանուր իրավասության դատարանները բավարարել են գրավով ազատ արձակելու միջնորդագրերի միայն 16,4 տոկոսը, իսկ 2018թ. առաջին ինն ամիսների այս ցուցանիշը կազմում էր 19,1 տոկոս: Մեղադրյալները ձերբակալության պահից սկսած ունեն փաստաբան ունենալու իրավունք, իսկ անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ըստ իրավապաշտպան դիտորդների կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Դիտորդները նշում էին, որ ոստիկանությունը որոշ դեպքերում խուսափում էր ապահովել պատշաճ իրավական գործընթացի ներքո ընձեռվող իրավունքների ապահովումը՝ պաշտոնապես ձերբակալելու փոխարեն քաղաքացիներին կանչելով և պահելով որպես գործով անցնող վկաներ և ոչ կասկածյալներ: Այս կերպ ոստիկանությունը կարողացել է այդ անձանց հարցաքննել՝ շրջանցելով փաստաբան ունենալու նրանց իրավունքը:

Կամայական ձերբակալություն. Տարվա ընթացքում եղել են կամայական ձերբակալությունների մասին մի քանի հաղորդումներ: Օրինակ՝ Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիան վիճարկում էր Իջևանում հունիսի 18-ին ոստիկանության կալանավորման գործողությունները՝ կապված այդ օրն ավելի վաղ անօրինական անտառահատումների հարցով բողոքի ակցիայի ընթացքում ոստիկանության հետ բախումներում կասկածվողների ձերբակալության հետ: Այդ անձանց ոստիկանական բաժին էին տարել գիշերվա կեսին, ոմանց՝ միայն ներքնահագուստով: Ըստ ՄԻՊ գրասենյակի Իջևանում բերման ենթարկվածները նշում էին, որ ոստիկանությունը չի հայտնել կալանավորման պատճառները, իսկ նրանց գտնվելու վայրի մասին ընտանիքներն իմացել են միայն ժամեր անց, երբ նրանց բերել են Երևան:

Նախնական կալանք. Նախնական կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Ըստ կառավարության՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց գրեթե 45 տոկոսը եղել են նախնական կալանքի տակ գտնվողները: Որոշ դիտորդներ համարում էին, որ քննիչները չափից շատ են օգտագործում նախնական կալանքը՝ որպես մեղադրյալներին խոստովանության դրդելու ու ինքնախոստովանական ապացույցներ ձեռք բերելու միջոց:

Թեպետ օրենքը պահանջում է, որ դատախազները ներկայացնեն լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները, որպես կանոն, երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է ընդհանուր առմամբ գերազանցի 6 ամիսը՝ սովորական գործերով և 12 ամիսը՝ ծանր գործերի պարագայում: Գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո օրենքով հետագա կալանքի վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ չկան, այլ միայն նշվում է դատաքննության «ողջամիտ տևողության» մասին: Դատավորները բավարարել են դատախազներից պարբերաբար ստացվող դատական լուումները հետաձգելու առաջարկները: Դատախազները դատական լուումների ձգձգման պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝ պաշպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Երկարատև դատաքննությունները նաև պայմանավորված են բոլոր օղակի դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ:

Կալանքի տակ գտնվողի կողմից կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու կարողությունը. Ըստ իրավական փորձագետների կասկածյալները չեն ունեցել գործնական հնարավորություն իրենց ձերբակալության օրինականությունը բողոքարկելու համար: Այն դեպքերում, երբ մեկ դատարան արդեն վճիռ է կայացրել նախնական կալանքի վերաբերյալ, հավանական չէր, որ մեկ այլ դատարան հարցականի տակ դներ այդ որոշումը:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անաչառություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում: 2018թ. քաղաքական անցմանը հաջորդած շրջանում պահպանվում էր ժողովրդի մեծ անվստահությունը դատական համակարգի անկողմնակալության հանդեպ, իսկ ՀԿ-ները փաստում էին, որ արդարադատության համակարգում մնացել են բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք ծառայել են նախորդ իշխանություններին: Մտահոգիչ էր մնում դատավորների կոռումպացվածությունը: Տարվա ընթացքում ՀԿ-ները ընդգծել են, որ բազմաթիվ դատավորներ ունեն նշանակալի քանակությամբ գույք և ակտիվներ, որոնք իրենց աշխատավարձերին համահունչ չեն, և նկատում էին, որ օբյեկտիվ չափանիշների վրա հիմնված դատավորների վերինգի բացակայությունը, հատկապես՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ու Սահմանադրական դատարանի դատավորների մասով, խաթարում են դատական համակարգի բարեվարքությունը:

Մայիսի 19-ին առերևույթ երևանյան դատարանի կողմից նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանքից ազատելու որոշմանն ի պատասխան, Նիկոլ Փաշինյանն իր աջակիցներին կոչ արեց արգելափակել երկրի բոլոր դատարանները. քայլ, որը որոշ դիտորդներ որակում էին որպես ճնշում դատական համակարգի վրա: Մայիսի 20-ին

Փաշինյանը լայնամասշտաբ դատական բարեփոխումների կոչ արեց, այդ թվում՝ դատավորների վեթինգի անցկացում՝ ասելով, որ իր կարծիքով նախկին կոռուպացված ռեժիմի հետ ունեցած շարունակական կապերի արդյունքում դատական համակարգը ենթարկվում է ստվերային և ապօրինի ազդեցությունների: Նա նաև կոչ արեց, որ հրաժարական տան կամ հեռացվեն պաշտոններից Եվրոպական դատարանի որոշումներով հաստատված՝ քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումներով դատավճիռների հեղինակ բոլոր դատավորները և այն դատավորները, որոնք պատրաստ չեն լինել անաչառ և օբյեկտիվ:

Սեպտեմբերի 27-ին երկու երիտասարդ տղամարդ հետապնդել են դատավոր Աննա Դանիբեկյանին՝ նրան վիրավորական խոսքեր ասել ու այդ միջադեպն ուղիղ միացմամբ ներկայացրել ֆեյսբուքում: Դանիբեկյանը նախագահում է նախկին նախագահ Քոչարյանի և մյուսների գործով դատական նիստերում: Բարձրագույն դատական խորհուրդը հայտարարությամբ դատապարտեց դատավորի անկախության ու մասնագիտական գործունեության դեմն ուղղված ճնշում և ոտնձգություններ գործադրելու այս դիպվածը: Լրատվամիջոցները հայտնաբերեցին, որ մեղավորները՝ Սարգիս Օհանջանյանն ու Նարեկ Մուրաֆյանը, Քոչարյանի աջակիցներ էին: Ոստիկանությունը երկու երիտասարդին էլ ձերբակալեց՝ դատարանի գործունեությանը խոչընդոտելու մեղադրանքով:

Ըստ դիտորդների վարչական դատարաններն համեմատաբար ավելի շատ ներքին անկախություն ունեին, սակայն կադրային պակաս կար, իսկ լսումների համար արդեն իսկ երկար հերթ էր գոյացել:

Հոկտեմբերի 10-ին հաստատվեց «Դատական և իրավական 2019-23թթ. բարեփոխումների ռազմավարությունը», որը նպատակ ունի մեծացնել հանրության վստահությունը դատական և արդարադատության համակարգերի նկատմամբ և ամրապնդել դատական անկախությունը:

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են դատական որոշումներին:

ՀԿ-ների հաղորդումների համաձայն դատավորները, որպես կանոն, անտեսել են մեղադրյալների պնդումներն այն մասին, որ ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնության միջոցով: Իրավապաշտպանները շարունակում էին մտահոգություն հայտնել այն փաստի վերաբերյալ, որ դատարանները հիմնվել են այնպիսի ապացույցների վրա, որոնք մեղադրյալների պնդմամբ ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես այն դեպքերում, երբ այդ ապացույցը դատապարտման հիմք է դարձել:

Դատաքննություն

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար և հրապարակային դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը չի իրացրել այս իրավունքը:

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն կասկածյալների այս իրավունքը սովորաբար չի հարգվել: Դատավարությունների ժամանակ իրավասու մարմիններն ամբաստանյալներին մանրամասնորեն ներկայացրել են նրանց առաջադրված մեղադրանքները, և օրենքը պահանջել է ըստ անհրաժեշտության ապահովել անվճար թարգմանություն ամբաստանյալների համար: Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լուսմները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ամբաստանյալներին հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Պաշտպանների թվի սղության պատճառով երբեմն այս պարտավորության իրականացումը Երևանից դուրս չի ապահովվել:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկաններին, մինչդեռ դատարանները կանոնավոր կերպով հակված են եղել ընդունել մեղադրող կողմի նյութերը: Մասնավորապես՝ օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատավորները չէին ցանկանում ընդունել առարկություններ կապված ոստիկանության փորձագետների հետ՝ խոչընդոտելով ամբաստանյալի պատշաճ պաշտպանության հնարավորությանը: Քրեական գործերում դատավորների վերահսկողությունը վկաների ցանկի ու հնարավոր վկաներին հրավիրելու նպատակահարմարության որոշման հարցերում նույնպես խոչընդոտ է եղել պաշտպանության համար: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել խնդրել պաշտպանության վկաների ներկայության ապահովումը: Ըստ փաստաբանների և տեղական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, այդ թվում և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ մեղադրող կողմը քրեական արդարադատության համակարգում գերիշխող դիրք է զբաղեցրել: Մարդու իրավունքների կազմակերպությունները նշում էին, որ բավարար չէին դատախազների անկողմնակալության ու հաշվետվողականության պահանջները, և չկային օբյեկտիվ չափանիշներ գլխավոր դատախազի թեկնածուների առաջադրման ու ընտրության համար:

«Թավշյա հեղափոխությունից» հետո շատ դատավորներ նախնական կալանքից ազատ էին արձակում քաղաքականապես զգայուն գործերով անցնող կասկածյալներին: Ըստ իրավապաշտպան խմբերի՝ քանի որ նրանց գործերում այլ հանգամանքների փոփոխություն չէր եղել, ուստի սա փաստում էր, որ մինչ 2018թ. ապրիլ/մայիս ամիս գրավի փոխարեն

նախնական կալանքի կիրառման մասին ընդունված դատական որոշումները քաղաքական շարժառիթներ են ունեցել:

Ամբաստանյալները, դատախազները և տուժողները դատավճռի բողոքարկման իրավունք են ունեցել և հաճախ իրացրել են այդ իրավունքը: Մի դատաքննության շրջանակում, որը մեղադրյալի հանդեպ անարդարացի էր համարում անգամ տուժողի ընտանիքը, շարունակվում էր Կարեն Կունգուրցևի դեմ Դավիթ Հովակիմյանի սպանության փաստով հարուցված քրեական գործով վարույթը. գործը սկզբնապես հարուցվել էր 2013թ., իսկ 2018թ. հուլիսին Վճռաբեկ դատարանը որոշեց այն ետ ուղարկել ընդհանուր իրավասության դատարան, իսկ Կարեն Կունգուրցևին գրավով ազատ արձակել: 2015թ. Կարեն Կունգուրցևն արդարացվել էր, սակայն 2017թ. քրեական բողոքարկիչ դատարանը բեկանեց որոշումը և վճռեց նրան դատապարտել յոթ տարվա ազատազրկման: Տուժողի ընտանիքը և Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիան շարունակում էին պաշտպանել Կունգուրցևի անմեղության մասին պնդումները՝ համոզված, որ Դավիթ Հովակիմյանի իրական սպանողը եղել է ԱԱԾ-ի պաշտոնյայի որդի, և վերջինս օգտագործելով իր դիրքը ներագդել է ոստիկանության ու դատախազության վրա և հանցանքը մեղսագրվել է Կունգուրցևին: Նոյեմբերի 14-ին գործով հիմնական վկաներից մեկը ցուցմունք տալիս ներողություն խնդրեց Կունգուրցևից և տուժողի հորից՝ վեց տարի առաջ իրավապահների ճնշման ներքո տված կեղծ ցուցմունքի համար, և ցուցմունք տվեց, որն ըստ էության արդարացնում էր Կունգուրցևին:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Հաղորդումներ երկրում քաղաքական բանտարկյալների կամ կալանավորվածների մասին չեն եղել:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, սակայն դատարանները լայնորեն ընկալվել են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները նաև հնարավորություն են ունեցել վիճարկել հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքների կամ օրենսդրական ակտերի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում: Ըստ փաստաբանների՝ ստորին աստիճանի դատարանները չէին հետևում վճռաբեկ դատարանի, ՄԻԵԴ-ի և սահմանադրական դատարանի նախադեպերին: Արդյունքում, առաջին աստիճանի դատարանները շարունակել են գործել միևնույն իրավական սխալները:

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների

հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ-ին: Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ-ի վճիռները դրամական փոխհատուցումների մասով, սակայն ՄԻԵԴ-ի կողմից որոշումների կայացումից հետո այդ գործերով բովանդակային վերանայում չի կատարվում: Երբ վճիռ է կայացվում այնպիսի գործով, որի հանդեպ կիրառելի է ՄԻԵԴ-ի նախկին որոշումներից մեկը, դատարանները հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

զ) Կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Իրավապահ կառույցները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությունը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա: Սահմանադրությամբ սակայն նախատեսվում են բացառություններ, երբ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել առանց դատական կարգադրագրի, երբ անհրաժեշտ է պաշտպանել պետական անվտանգությունը, և պայմանավորված հաղորդակցության մաս կազմողների հատուկ կարգավիճակով: Չնայած իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն դիտորդները պնդում են, որ որոշ դատավորներ հաճախ ԱԱԾ-ի և Ոստիկանության գաղտնալսման կամ հետևելու այլ միջնորդագրերը բավարարելիս չեն պահանջել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով: Մյուս կողմից, ըստ հաղորդումների այս իրավական պահանջը պահպանվել է ՀՔԾ-ի, Քննչական կոմիտեի և Պետական եկամուտների կոմիտեի միջնորդագրերի դեպքում:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի, այդ թվում և մամուլի ազատություն

Երկրի սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խոսքի, այդ թվում և մամուլի ազատությունը:

2018թ. քաղաքական անցման շրջանից հետո լրատվական դաշտը դարձել է ավելի ազատ, քանի որ լրատվամիջոցները սկսել են հետ քաշվել ինքնագրաքննության նախկին

գործելառճից. այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ որոշ լրատվամիջոցներ խուսափել են իշխանություններին քննադատելուց, որպեսզի չհամարվեն «հակահեղափոխական»: 2018թ. դեկտեմբերի ընտրությունների մասին իր վերջնական գեկույցում ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը փաստում էր, որ թեպետ իրենց գրույցներում շատերը նշում էին, որ մամուլի ազատության ու բազմակարծության մեծացման մասով 2018թ. ապրիլից եղել են դրական տեղաշարժեր, ոմանք նաև նկատում էին, որ հետհեղափոխական հանրային բանավեճում տեղ չի տրվում քննադատությանն ուղղված կառավարությանը, և մասնավորապես՝ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին: Շատ ավանդական ու առցանց լրատվամիջոցներ շարունակել են իրենց լուսաբանումը՝ առանց օբյեկտիվության ապահովման:

Խոսքի ազատություն. Անհատներն ազատ քննադատել են կառավարությանը՝ առանց վախենալու ձերբակալումից: 2018թ. «Թավշյա հեղափոխությունից» հետո կոչեր եղան ատելության խոսքի հետ կապված իրավական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ, այն միջադեպերից հետո, երբ մարդկանց հանդեպ բռնության կոչեր էին հնչում պայմանավորված նրանց քաղաքական հայացքներով, կրոնական պատկանելությամբ, ինչպես նաև սեռական և գենդերային ինքնությամբ:

Մամուլի ու լրատվամիջոցների, այդ թվում՝ առցանց լրատվամիջոցների ազատություն. Հեռարձակող լրատվամիջոցներն ու մեծ շրջանառություն ունեցող տպագիր լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ չեն ապահովել քաղաքական կարծիքների բազմազանություն ու օբյեկտիվ լուսաբանում: Հեռարձակող լրատվամիջոցների և լրագրերի գերակշիռ մասն արտացոլում են իրենց սեփականատերեր հանդիսացող մասնավոր անձանց կամ խմբերի քաղաքական դիրքորոշումները և ֆինանսական շահերը, և դրանց մեծ մասն ըստ հաղորդումների կապ ունեն նախկին իշխանությունների կամ խորհրդարանական ամենախոշոր ընդդիմադիր կուսակցության հետ: Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էին մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրներից մեկը բնակչության մեծ մասի համար: Ըստ լրատվական որոշ դիտորդ կառույցների հանրային հեռուստաընկերությունը շարունակել է լրատվությունը մատուցել իշխանամետ դիրքերից՝ քաղաքական անցումից հետո մի կառավարության դիրքորոշումների փոխարեն ներկայացնելով մյուսինը: Այնուհանդերձ, Հանրային հեռուստաընկերությունը բաց էր ու հասանելի նաև ընդդիմության համար և լուսաբանում էր հասարակայնությանը հետաքրքրող հարցերի ավելի լայն շրջանակ, քան նախկինում:

Սոցիալական հարթակների օգտատերերն ազատորեն արտահայտել են իրենց կարծիքը նոր և նախկին կառավարությունների վերաբերյալ տարբեր սոցիալական հարթակներում: Սակայն տարվա ընթացքում շարունակել են կտրուկ ավելանալ սոցիալական ցանցերում կեղծ էջերի օգտագործումն ու մեդիա տիրույթը մանիպուլյացիաների ենթարկելու փորձերը: Ըստ

լրատվական տիրույթի դիտորդ կառույցների կառավարությանը թիրախավորելու համար անհատների կողմից օգտագործում էին մանիպուլյացիոն այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ հիբրիդ կայքերը, հակասական բլոգերները, տրոլինգը, շինծու ֆեյսբուքյան խմբերն ու կեղծ գրառումները:

Երկրի սակավաթիվ անկախ լրատվամիջոցները, հիմնականում՝ առցանց լրատվամիջոցներ, ինքնաբավ չեն և գոյատևում են միջազգային դրամաշնորհների հաշվին և ունեն սահմանափակ եկամուտներ գովազդից:

Լրատվականների գովազդի շուկայում 2018թ. «թավշյա հեղափոխությունից» հետո նշանակալի փոփոխություններ չեն եղել և շուկայի հիմնական դերակատարները մնացել են նույնը: Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի 2016թ. ներկայացրած զեկույցի համաձայն «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիսիզ» գովազդային միջնորդ հանդիսացող կազմակերպությունը տիրապետում էր երկրի հեռուստաալիքների գովազդային համախառն բյուջեների 74 տոկոսին և ուներ երկրի ամենադիտված հինգ հեռուստաալիքներով գովազդի վաճառքի բացառիկ իրավունքներ: Մեկ այլ ընկերություն՝ «Ղի Ջի սեյլզը», որի վերահսկիչ բաժնեմասը պատկանում է «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիսիզի» բաժնետերերին, վերահսկել է առցանց գովազդային շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ գործելով գրեթե նույն կերպ, ինչ «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիսիզը»: Տարվա ընթացքում աճել է գովազդն ինտերնետ տիրույթում, սակայն դա գովազդային շուկայի մի փոքր բաղադրիչն է միայն:

Մեդիա ոլորտի ընկերությունների սեփականատերերի հարցում հիմնականում բացակայել է թափանցիկությունը: Հայաստանի Հանրապետության Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության գործողությունների չորրորդ ծրագիրը (2018-20թթ.) ներառում է հանձնառություններ սեփականատերերի մասին տվյալների ապահովման վերաբերյալ: Լրատվական ՀԿ-ները պաշտպանում էին այն մոտեցումը, որ գործողությունների ծրագրով լրատվական ոլորտը համարվեր առաջնահերթ ոլորտ և առաջարկում էին փոփոխություններ կատարել Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում, որը կնպաստեր մեդիա ոլորտի սեփականատերերի մասով թափանցիկությանը:

Կառավարությունը պահպանել է դե ֆակտո մենաշնորհը թվային հեռարձակման մուլտիպլեքսի մասով, սակայն հեռուստաալիքների գերակշիռ մասը նախորդ իշխանությունների տեսակետներն է ներկայացրել: Մարզային տասը հեռուստաընկերություններ շարունակում էին փակվելու ռիսկի առաջ մնալ՝ պայմանավորված հեռուստալսարանի և գովազդատուների նվազեցմամբ: 2016թ., երբ անցում կատարվեց թվային հեռարձակման պետության կողմից տնօրինվող մեկ թվային մուլտիպլեքսի միջոցով, այս հեռուստաընկերությունները լիցենզիա չստացան և շարունակեցին հեռարձակումն անալոգային համակարգի միջոցով: Մասնավոր մուլտիպլեքսի ձեռքբերման ու շահագործման ծախսային ծանր բեռի հետևանքով 2016թ. թվային հեռարձակման անցնելուց հետո հայտարարված երեք մրցույթներն այդպես էլ չկայացան, քանի որ հայտեր չներկայացվեցին:

Արդյունքում հունվարի 31-ին կառավարությունը որոշեց փակել «Շիրակ» հանրային հեռուստաընկերությունը, քանի որ վերջինս անալոգային հեռարձակմամբ անկարող էր ներգրավել լայն հեռուստալսարան, իսկ թվային հեռարձակման անցնելու համար կպահանջվեր նշանակալի ֆինանսական ներդրում, ինչը կառավարությունը չէր կարող կատարել: Լրատվական դիտորդ կառույցները քննադատեցին այս որոշումը և կառավարությանն հորդորեցին փոփոխություն կատարել օրենսդրության մեջ, որպեսզի մասնավոր մուլտիպլեքս առաջարկողների մուտքը խրախուսվի և վերջ դրվի երկրում թվային հեռարձակման մենաշնորհին:

Բռնություն և ոսնձգություններ. «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» տեղական ՀԿ-ի հաղորդմամբ տարվա առաջին ինն ամիսների ընթացքում գրանցվել է լրագրողների նկատմամբ բռնության երեք դեպք: Լրագրողներից երկուսի վրա հարձակում են գործել Երևանի քաղաքապետարանի կողմից ապօրինի շինությունների հանման աշխատանքների ընթացքում ապամոնտաժվող սրճարանների աշխատակիցները: Քրեական գործեր չեն հարուցվել: Երրորդ դեպքում ԱՄԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի թիկնապահը հրել և գետնին է գցել լրագրողին:

Փետրվարի 27-ին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն արդարացրեց Կոտայքի ոստիկանական վարչության պետ Արսեն Արզումանյանին, որին մեղադրանք էր ներկայացվել 2018թ. ապրիլին լիազորությունները չարաշահելու և լրագրող Տիրայր Մուրադյանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու համար: Այս արդարացումը բողոքարկվեց և Քրեական վերաքննիչ դատարանը հունիսի 5-ին մեղավոր ճանաչեց Արզումանյանին՝ նշանակելով տուգանք 500.000 ՀՀ դրամի (1.000 ԱՄՆ դոլարի) չափով:

Զբաղարտության/սուտ մատնության մասին օրենքներ. Մեդիա ոլորտի փորձագետները մտահոգություններ են հայտնել զբաղարտող ու հեղինակագրկող հրապարակումների համար օրենսդիրների, նախկին պաշտոնյաների ու այլ անձանց կողմից տարվա ընթացքում լրատվամիջոցների դեմ հարուցված գործերի աննախադեպ թվի վերաբերյալ: Ըստ «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» տարվա առաջին ինն ամիսների ընթացքում 83 դատական հայց է ներկայացվել, ինչը նշանակալի ֆինանսական բեռ է ստեղծում լրատվամիջոցների համար:

Ազգային անվտանգություն. Ըստ մեդիա ոլորտի փորձագետների տարվա ընթացքում կտրուկ ավելացել են կեղծ լուրերի ու ապատեղեկատվության տարածումը՝ կապված սոցիալական ցանցերի ու հարթակների հետ: Կառավարությունը պնդում էր, որ նախկին իշխանության ներկայացուցիչները, որոնց պատկանում է լրատվամիջոցների մեծ մասը, այդ թվում՝ համապետական հեռարձակում ապահովող հեռուստալիքներ, օգտագործել են լրատվամիջոցները հասարակական կարծիքը շահարկելու ու իշխանությունների դեմ տրամադրելու նպատակով:

Ապրիլի 4-ին վարչապետ Փաշինյանն ԱԱԾ-ին հրահանգեց պայքարել բոլոր նրանց դեմ, ովքեր կօգտագործեն զանգվածային լրատվամիջոցներն ու սոցիալական մեդիան «հասարակական կարծիքը շահարկելու» նպատակով: Մեդիա ոլորտի փորձագետները, այդ թվում նրանք, որոնք կեղծ տեղեկատվության ու ատելության խոսքի մասով միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն էին տեսնում, քննադատեցին վարչապետի այս հրահանգը՝ այն որակելով ազատ խոսքը լռեցնելու փորձ: Ապրիլի 9-ին ԱԱԾ-ը հայտնեց վարչապետի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ առնչություն ունեցող անձի անունից հանդես եկող Ֆեյսբուքյան մի կեղծ օգտատիրոջ ձեռքակալության մասին: Այդ էջը տարածում էր կեղծ լուրեր և հրահրում բռնություն, այդ թվում՝ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Թեպետ կրոնական ատելություն հրահրելու մեղադրանքներով ԱԱԾ-ն այս էջի քննությունը սկսել էր դեռևս 2018թ. աշնանից, սակայն ձեռքակալությունը տեղի ունեցավ միայն վարչապետի ապրիլի 4-ի հրահանգներից հետո:

Ինտերնետի ազատություն

Կառավարությունը չի սահմանափակել կամ ընդհատել ինտերնետի հասանելիությունը կամ գրաքննել առցանց բովանդակությունը և չեն եղել արժանահավատ հաղորդումներ առանց համապատասխան իրավական հիմքերի կառավարության կողմից մասնավոր առցանց նամակագրությանը հետևելու վերաբերյալ:

Մայիսին Ֆեյսբուքը մի քանի շաբաթով արգելափակեց քաղաքացիական հասարակության մի քանի հայտնի ակտիվիստների էջերը: Ակտիվիստների էջերի արգելափակման պատասխանատվությունը ստանձնեց «Digital Granate» հասարակական նախաձեռնություն Ֆեյսբուքյան էջը՝ նշելով, որ նպատակ ունեն «մաքրել համացանցը» քաղաքացիական հասարակության ակտիվիստներից, որոնց շարքում են «արտասահմանյան գործակալներ», «ծախված քաղաքական գործիչներ» և ԼԳԲՏԻ համայնքի անդամներ: Տեղի թվային մեդիափորձագետները թվային իրավունքների միջազգային մի խմբի օգնությամբ վերացրեցին էջերի արգելափակումը, բայց արգելափակման արշավի կազմակերպիչները չբացահայտվեցին:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների մասով կառավարության կողմից չեն եղել սահմանափակումներ:

Կառավարությունն ակնհայտորեն աջակցել է ուսումնակրթական ազատությանը և միջոցներ ձեռնարկել ակադեմիական շրջանակներն ապաքաղաքականացնելու, այդ թվում՝ հանրային բուհերի հոգաբարձուների նոր խորհուրդների ձևավորման ուղղությամբ: Կոռուպցիայի, ինչպես նաև ժողովրդավարական բարեփոխումներին չաջակցելու հետ կապված՝ հանրության

ու կառավարության ճնշումների ներքո հրաժարական տվեցին մի շարք ռեկտորներ, որոնք առերևույթ կամ ենթադրաբար կապ ունեին նախորդ ռեժիմի հետ: Այս ռեկտորների շարքում էր երկրի ամենահին բուհի՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Միմոնյանը: Նախկին իշխանական Հանրապետական կուսակցության անդամ Արամ Միմոնյանը հրաժարական տվեց կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հետ ամիսներ տևած հրապարակային և հակասական առճակատումից հետո:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը, և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս ազատությունները:

Խաղաղ հավաքների ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը: 2018թ. գարնան «թավշյա հեղափոխությունից» հետո նոր կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս իրավունքը:

Ըստ «Հայկական հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի մշտադիտարկման զեկույցի 2018թ. հուլիսից մինչև հունիս ժամանակահատվածում բարելավվել է հանրահավաքների ազատությունը, որի արդյունքում 2018թ. գարնան քաղաքական փոփոխություններից հետո տարվա ընթացքում եղել են ավելի շատ հանրահավաքներ: Ջեկույցը նաև մատնանշում էր, որ ոստիկանության մեթոդներն ավելի զուսպ են դարձել: Դիտարկված առավել նշանակալի խնդիրները վերաբերում էին մասնակիցների կամ կազմակերպիչների կողմից ատելության խոսքի կիրառմանը՝ թիրախավորելով անձի գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը կամ կրոնական հայացքները:

Օգոստոսի 19-ին ոստիկանությունը Երևանի կենտրոնի խոշոր փողոցներից մեկից խաղաղ հավաքի մասնակիցներին հանեց՝ ուղղորդելով դեպի մոտակա մայրը: Ցուցարարները բողոքում էին Ջերմուկում հանքի շահագործման դեմ: Օգոստոսի 20-ին Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը և այլ ՀԿ-ներ հայտարարություն տարածեցին՝ միջադեպը որակելով որպես 2018թ. հեղափոխությունից հետո տեղ գտած հավաքների ազատության ամենալուրջ խախտումը: Ըստ հայտարարության ոստիկանությունն ուժի կիրառմամբ և կամայականորեն բերման ենթարկելով ցուցարարներին հեռացրել է Բաղրամյան պողոտայի երթևեկելի հատվածից, ապա նրանց թույլ չի տրվել մուտք գործել Ազգային ժողովի հարակից տարածք, որը նախկինում բաց էր հանրության համար: Հայտարարության մեջ նշվում էր, որ ոստիկանների գործողություններից հետո մի շարք

անձինք բուժօգնության կարիք են ունեցել, իսկ մեկը հոսպիտալացվել է: Օգոստոսի 20-ին ոստիկանության կողմից տրվեց պարզաբանում, որ կիրառված ֆիզիկական ուժն իրավիճակին համարժեք է եղել:

Կառավարությունը շարունակում էր ջանքերը՝ ուղղված 2018թ. ապրիլի առավելապես խաղաղ դեպքերի ժամանակ ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման դեպքերի համար պատասխանատվության ենթարկելուն: Ոստիկանության գործողությունների վերաբերող երկու պաշտոնական քննությունների արդյունքներով երկու ոստիկան նկատողություն ստացան: Օգոստոսի 9-ին կառավարությունը կասեցրեց ոստիկանական բռնության բազմակի դրվագներ ներառող մի քրեական գործի քննությունն այն բանից հետո, երբ քննիչները, որոնք բացահայտել էին 55 տուժողի, հարցաքննել 200 հոգու, դիտարկել տեսագրությունները և անցկացրել քրեական փորձաքննությունը, չկարողացան բացահայտել մեղավորներին: Մի քանի այլ իրավապահներ, որոնք մեղադրվում էին ձայնային նոնակների կիրառման հարցում իրենց լիազորությունները չարաշահելու մեջ ներառվեցին 2018թ. հոկտեմբերի համաներման շրջանակում: Շարունակվում էր պաշտոնական լիազորություններն անցնելով ցուցարարների նկատմամբ ծանր հետևանքների հանգեցրած բռնություն կիրառման մեջ մեղադրվող ոստիկանության ներքին զորքերի նախկին պետ Լևոն Երանոսյանի գործով դատաքննությունը: Շարունակվում էր նաև 2018թ. ապրիլին ցուցարարների վրա հարձակում գործելու փաստով Մասիսի համայնքապետ Դավիթ Հայրապետյանի և յոթ այլ անձանց դեմ հարուցված գործով դատաքննությունը: Յոթ դատական հայցերի շրջանակում քննություն էր ընթանում ոստիկանության միջամտությունների մասով՝ կապված խոսքի ազատության, խաղաղ հավաքների, բուժօգնություն ստանալու իրավունքների, խտրականության և խոշտանգումների ու անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հետ:

Միավորումների ազատություն

Այս իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ ու օրենքներով և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այն: Հասարակական կազմակերպությունների մասին օրենքով դատարանում իրենց շահառուների օրինական շահը ներկայացնելու ՀԿ-ների իրավասությունը սահմանափակվում է միայն շրջակա միջավայրի պահպանության հարցերով: Այս սահմանափակումը հակասում է 2010 թ. Սահմանադրական դատարանի որոշմանը, որը թույլ է տալիս բոլոր հասարակական կազմակերպություններին դատարանում հանդես գալ որպես կողմ:

զ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/religiousfreedomreport/ էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն

Օրենքը սահմանում է ներքին տեղաշարժի, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս իրավունքները:

ե) Ներքին տեղահանված անձինք

2018թ. դեկտեմբերի դրությամբ Ներքին տեղահանության մոնիտորինգի կենտրոնի տվյալների համաձայն կա դեռևս մոտ 8.400 ներքին տեղահանված անձ (ՆՏԱ)՝ 1988-94թթ. տարիանված շուրջ 65.000 տնային տնտեսություններից: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար ապահովված չէին համարժեք բնակարանային պայմաններ ու սահմանափակ էին տնտեսական հնարավորությունները: Կառավարությունը չուներ ՆՏԱ-ներին թիրախավորող ծրագրեր ու ընթացակարգեր, որոնք կխթանեին ՆՏԱ-ների ապահով, կամավոր, արժանապատիվ վերադարձին, վերաբնակեցմանը կամ ինտեգրմանը տեղում:

զ) Փախստականների պաշտպանություն

Չարաշահումներ կապված միգրանտների, փախստականների ու քաղաքացիություն չունեցող անձանց հետ. Եղել են ծագման երկրի, ռասայական կամ կրոնական հիմքով պայմանավորված ոչ համակարգային խտրական դրսևորման մասին հաղորդումներ կապված ապաստան հայցողների դիմումների ընդունման ու կալանավորման հարցերի հետ, ինչպես նաև եղել են դժվարություններ կապված ինտեգրման հետ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշում էին աշխատանք փնտրող օտարերկրացի միգրանտների նկատմամբ խտրական և կասկածամիտ վերաբերմունքի մասին:

Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում երկրի սահմանը ցամաքով կամ օդով հատելուց հետո անօրինական մուտքի համար ձերբակալվել է 15 օտարերկրացի, մինչդեռ 2018թ. նույն ժամանակահատվածում այդ թիվը կազմում էր 28 հոգի: Չնայած օրենքի համաձայն ապաստան հայցողների համար չի նախատեսվում քրեական պատասխանատվություն ապօրինի սահմանահատման համար, իրավասու մարմինները պահանջել են, որ նրանք մնան կալանքի տակ մինչև իրենց դիմումի բավարարումը կամ կրեն պատժի մնացյալ մասը:

Իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և այլ մարդասիրական կազմակերպությունների հետ՝ ՆՏԱ-ներին, փախստականներին, վերադարձող փախստականներին, ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց և խնդրո առարկա այլ անձանց աջակցության ու պաշտպանության հարցերում:

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Օրենքը հաշվի է առնում երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցողների և տրավմա վերապրածների առանձնահատուկ կարիքները և կալանավայրերին թույլ է տալիս ընդունել ապաստանի դիմումներ: Ծագումով ոչ-հայ փախստականներին քաղաքացիություն շնորհվում է երկրում երեք տարվա մշտական օրինական կացությունից հետո:

Ապաստանի հետ կապված ընթացակարգերի թերություններից էին թարգմանիչների համար պետական ֆինանսավորման սուղ լինելը և համապատասխանելիությունը դիտարկող պաշտոնյաների կարողությունների հետ կապված բացերը: Դատական համակարգի կարողությունների մեծացմամբ ավելացել են Միգրացիայի պետական ծառայության (ՄՊԾ) ապաստանի վերաբերյալ որոշումները չեղյալ համարելու դեպքերը: 2018թ. վարչական դատարանի կողմից բեկանվեց Իրաքից ժամանած ընտանիքին փախստականի կարգավիճակ տալը մերժելու մասին ՄՊԾ որոշումը, և դիմումատուներից պահանջվեց նորից սկսել ապաստան հայցելու գործընթացը: Ընդհանուր առմամբ, դատարաններն ավելի շատ ուշադրություն են դարձրել ապաստանի դիմումների փաստական տվյալներին և առավել համակարգված կերպով են կիրառել ծագման երկրի մասին տեղեկությունները:

Իրավասու մարմինները երկրում գտնվող ազգությամբ հայ սիրիացիներին շարունակել են առաջարկել պաշտպանության զանազան տարբերակներ, մասնավորապես՝ արագացված ընթացակարգով քաղաքացիություն, կացության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ: Արագացված կարգով քաղաքացիության տրամադրմամբ Սիրիայից տեղահանված անձինք ձեռք բերեցին առողջապահական ու հիմնական սոցիալական ծառայությունների մասով նույն իրավունքները, ինչ երկրի քաղաքացիները: Երկրում իրականացվող համապետական բարեփոխումներից շատերը, ինչպիսիք են սոցիալական ծառայությունների ավելացումը, կենսաթոշակների բարձրացումը, առողջապահական ծառայությունների հասանելիության մեծացումը կիրառելի են եղել նաև քաղաքացիություն ստացած փախստականների մասով:

Թեպետ փախստականի կարգավիճակի սահմանման հետ կապված ընթացակարգերի ու որոշումների կայացման գործընթացի ընդհանուր որակը վերջին տասնամյակի ընթացքում բարելավվել է, սակայն մտահոգություններ են մնում ոչ առաքելական քրիստոնյա և ծագումով ոչ հայ կրոնական և սեռական որոշակի նկարագիր ունեցող անձանց ապաստան հայցելու գործերի որոշումների առնչությամբ:

Հիմնական ծառայությունների հասանելիություն. Շատ փախստականներ չունենին աշխատելու կամ կրթություն ստանալու հնարավորություն, քանի դեռ իրենց գործն իրավական վարույթում էր գտնվում, թեպետ առկա էին այս իրավունքները պաշտպանող դրույթներ:

Փախստականներին տրամադրված կացարանները եղել են ոչ բավարար քանակի ու վատ պայմաններով, և այդ հարցը, ինչպես նաև զբաղվածությունը, շարունակում էր մնալ փախստականների ամենամեծ խնդիրը: Տեղահանված շատ ընտանիքներ օգտվում էին վարձավճարի սուբսիդավորման ծրագրից, որին աջակցում էին ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը և սփյուռքի կազմակերպությունները: Իշխանությունների կողմից գործարկվել էր փախստականների ինտեգրման տուն՝ նախատեսված 29 հոգու համար և փախստականի կարգավիճակի շնորհումից հետո առաջին մի քանի ամիսների համար այստեղ առաջարկում էին անվճար օթևան: Լեզվական տարբերությունները ստեղծում էին խոչընդոտներ աշխատանքի, կրթության և օրենքով նախատեսվող ծառայությունների հասանելիության հարցերում:

Հիմնարար լուծումներ. Կառավարությունն ընդունել է փախստականներ վերաբնակեցման համար և երկրի տարածքում բնակվող փախստականներին առաջարկել է քաղաքացիություն ստանալու հնարավորություն: ՄՊԾ-ը նաև առաջարկել է ինտեգրման ծրագրեր Արևմտյան Եվրոպայի երկրներից ինքնակամ վերադարձած կամ արտաքսված անձանց համար: Նոյեմբերի 21-ին կառավարությունը 1,5 միլիարդ ՀՀ դրամ (3,2 միլիոն ԱՄՆ դոլար) հատկացրեց 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին Ադրբեջանից փախուստի դիմած 112 փախստական ընտանիքների մշտական բնակարանով ապահովելու համար:

Է) Քաղաքացիություն չունեցող անձինք

Ըստ պաշտոնական տվյալների քաղաքացիություն չունեցող անձանց թիվը նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում էր 929 հոգի, մինչդեռ 2018թ. այդ թիվն ավելի քիչ էր՝ 801 հոգի: Այս թվի ավելացումը պայմանավորված է այլ երկրների, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ձեռք բերելու նպատակով Հայաստանի քաղաքացիությունից հրաժարվող անձանց թվի ավելացմամբ: Բացի այդ, իրավասու մարմինները հուլիսի դրությամբ որպես քաղաքացիություն չունեցող անձ էին որակում նաև Ադրբեջանից եկած շուրջ 1.400 փախստականների:

Օրենքը նախատեսում է քաղաքացիության շնորհում հանրապետության տարածքում ծնված քաղաքացիություն չունեցող երեխաներին:

ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է գաղտնի քվեարկության միջոցով իրացվող համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա ազատ ու

արդարացի պարբերական ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու հնարավորություն:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. 2018թ.դեկտեմբերին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ինչին նախորդեց կարճ ու եռուն, սակայն ազատ ու մրցակցային ընտրաշավ, որտեղ ընտրապայքարի դուրս եկած բոլոր կողմերն ընդհանուր առմամբ ունեին հավասար հնարավորություններ: Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Իմ քայլը» դաշինքը ստացավ քվեների ավելի քան 70 տոկոսը և խորհրդարանական տեղերի գերակշիռ մասը: Խորհրդարան անցան նաև «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները՝ համապատասխանաբար ստանալով քվեների 8.3 և 6.4 տոկոսը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախնական և մարտի 7-ի վերջնական զեկույցներում նշվում էր, որ «արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների ժամանակ... Կանխամտածված ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների ընդհանուր բացակայությունն իրական մրցակցության հնարավորություն է ընձեռել»: Վերջնական զեկույցում սակայն նշվում էր, որ թեպետ ընտրապայքարի մասնակիցների կողմից չեն եղել հաղորդումներ ընտրակաշառքի և ընտրական այլ խախտումների համակարգային փորձերի մասին, սակայն ոմանք պնդում էին, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կարճաժամկետ պայմանագրեր է կնքել քարոզարշավի իրականացման աշխատանքներում ընդգրկված անձանց և քաղաքացիական դիտորդների հետ՝ հնարավոր է վերջիններիս ձայները գնելու նպատակով:

ԺՀՄԻԳ դիտորդները նշել էին, որ մրցակիցները «կարողացել են ազատորեն իրականացնել իրենց քարոզարշավները. լիովին պահպանվել են միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների, արտահայտվելու և տեղաշարժի հիմնարար ազատությունները»: Միննույն ժամանակ նրանք ընդգծում էին, որ քարոզարշավի ընթացքում նկատելի է եղել ապատեղեկատվության տարածումը, ինչպես նաև սոցիալական հարթակներում սադրիչ մտքերի փոխանակումը թեկնածուների միջև: Ընտրական գործընթացի վրա սովոր նետած սակավաթիվ խնդիրներից դիտորդները նշում են, որ «քարոզարշավի ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի պատճառով»: Օրինակ՝ կազմակերպչական այնպիսի ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, հաղորդակցության, փոխադրամիջոցների և անձնակազմի հետ կապված ծախսերը չեն համարվում ընտրական ծախսեր, և, հետևաբար կարող են չզեկույցվել՝ «խաթարելով հաշվետվական համակարգի արժանահավատությունը և ընտրական գործընթացի շահագրգիռ կողմերին հասանելի տեղեկատվության

թափանցիկությունը»: ԵԱՀԿ դիտորդների կողմից մատնանշված այլ թերություններն առնչվում էին ընտրաբողոքների ներկայացման նեղ իրավական շրջանակին:

Քաղաքական կուսակցություններ և քաղաքական մասնակցություն. Օրենքը չի սահմանափակում կուսակցությունների գրանցումը կամ գործունեությունը:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Որևէ օրենք չի սահմանափակում կանանց կամ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, սակայն հասարակության նահապետական բնույթը խոչընդոտել է կանանց լայնամասշտաբ մասնակցությանը երկրի քաղաքական և տնտեսական կյանքում, ինչպես նաև հանրային հատվածի որոշումներ կայացնող պաշտոններում: Երկրի 10 մարզերից ոչ մեկի մարզպետը կին չէր: Առաջին կին քաղաքապետը ընտրվեց 2018թ. հոկտեմբերին:

2018թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ զեկույցներում նշվում էր, որ թեկնածուների ցուցակները բավարարել են օրենքով սահմանված գենդերային ներկայացվածության 25 տոկոսի շեմը և առաջադրված 1.444 ընդհանուր թեկնածուների 32 տոկոսը կանայք էին: ԵԱՀԿ-ը նշում էր, որ այս քվոտան, այնուամենայնիվ, չի երաշխավորում խորհրդարանում կանանց նույն ներկայացվածությունը, քանի որ մանդատների կեսը բաշխված է ըստ վարկանիշային ձայների: Քարոզչության միջոցառումներին կուսակցությունները հազվադեպ էին ներկայանում կին-թեկնածուներով. կանայք միայն երբեմն էին ինքնուրույն քարոզչություն իրականացնում, իսկ հանրահավաքների ժամանակ հազվադեպ էին հանդես գալիս որպես բանախոս: Որոշ կին թեկնածուներ իրենց սեռի պատճառով դարձել էին վիրավորական հռետորաբանության թիրախ:

Խորհրդարանում մեկական տեղ է նախատեսվում ամենամեծ բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար՝ եզդիներ, քրդեր, ասորիներ և ռուսներ: Խորհրդարանում չորս տեղ զբաղեցնում էին այս խմբերի ներկայացուցիչները:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքով պաշտոնական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ: 2018թ. մայիսի «թավշյա հեղափոխությունից» հետո կառավարությունը քննություններ սկսեց, որոնք բացահայտեցին համակարգային կոռուպցիայի դրսևորումներ հանրային և մասնավոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Կառավարությունը հարուցեց բազմաթիվ քրեական գործեր նախկին պետական պաշտոնյաների, նրանց ազգականների, պատգամավորների, ու մի քանի գործ էլ դատական համակարգի անդամների ու նրանց ազգականների կողմից թույլ տրված

ենթադրյալ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, որտեղ խոսք էր գնում մի քանի հազարից միլիոնավոր ամերիկյան դոլարների մասին: Այս գործերից շատերը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էին, և պարբերաբար հաղորդումներ էին լինում նոր գործերի մասին: Կառավարությունը նաև այսօրինակ գործեր հարուցեց ընթացիկ կառավարության մի քանի պաշտոնյաների նկատմամբ:

Կոռուպցիա. Երկիրը ժառանգել է համակարգային կոռուպցիա բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ շինարարություն, հանքարդյունաբերություն, հանրային կառավարում, խորհրդարան, դատական համակարգ, գնումների գործընթաց, պետության կողմից տրվող դրամաշնորհներ: Կային պնդումներ պետական միջոցների յուրացման, կասկածելի գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավվածության և կառավարության հետ կապեր ունեցող ընկերություններին տրված հարկային և մաքսային արտոնությունների մասին: 2018թ. կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարն հռչակեց որպես գերակա ուղղություն և տարվա ընթացքում ձեռնամուխ եղավ դրա վերացմանն ուղղված միջոցների: Թեպետ բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարեցին, որ երկրում «կոռուպցիան վերացվել է», սակայն տեղական դիտորդները նկատում էին, որ հակակոռուպցիոն միջոցների մասով անհրաժեշտ էին դրանք ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելուն ուղղված քայլեր: Քրեական կոռուպցիոն գործեր են բացահայտվել հարկային և մաքսային ծառայություններում, կրթության և առողջապահության նախարարություններում և դատական համակարգում:

Ըստ Գլխավոր դատախազության 13 ամիսների ընթացքում, այսինքն՝ հունիսի դրությամբ իրավապահների և հարկային մարմինների կողմից բացահայտվել են 110,5 միլիարդ ՀՀ դրամի (համարյա 230 միլիոն ԱՄՆ դոլար) խախտումներ, որոնք ներառում են պետությանը հասցված վնասը, յուրացված միջոցները, պաշտոնեական դիրքի չարաշահումը և կաշառքը: Այս միջոցներից 30,1 միլիարդ ՀՀ դրամը (63 միլիոն ԱՄՆ դոլար) ըստ հաղորդումների վերադարձվել է պետական բյուջե. ՀԿ-ները մտահոգություն էին հայտնում այս գործընթացի ոչ բավարար թափանցիկության վերաբերյալ:

Տարվա ընթացքում նախկին պաշտոնյաների կողմից եղան հրապարակային հայտարարություններ պետությանն ակտիվները վերադարձնելու իրենց մտադրության մասին, որպեսզի ենթադրաբար խուսափեն քրեական հետապնդումից: Գործընթացը, որով կառավարությունն ընդունում կամ բանակցում էր նման առաջարկները, հստակ չէին:

2018թ. դեկտեմբերին Գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցեց բնապահպանության նախկին նախարար, ապա ազգային ժողովի պատգամավոր Արամ Հարությունյանի դեմ՝ առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու համար: Ըստ Հատուկ քննչական ծառայության Հարությունյանը չարաշահել էր միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի նախագահի իր դիրքը ռազմավարական նշանակության հանքանյութեր պարունակող հողակտորների ընդերքօգտագործման իրավունքները սահմանելիս՝ ստանալով 14 միլիոն ԱՄՆ դոլար կաշառք մի բիզնես սեփականատիրոջից հանքաերակումների

ուսումնասիրության 10 հատուկ լիցենզիաներ տրամադրելու գործընթացն իրականացնելու, հետագայում ուսումնասիրության ժամկետները երկարացնելու և հանքերի շահագործման թույլտվություն ստանալու հարցը նրա օգտին լուծելու համար: Նոյեմբերի վերջի դրությամբ Հարությունյանը թաքնվում էր քննությունից:

Ֆինանսական հայտարարագրում. Օրենքով պահանջվում է, որ բոլոր բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր. սրանք ինտերնետում մասնակիորեն հասանելի են եղել հանրությանը: Օրենքը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին շնորհել է իրավասություն ու գործիքներ՝ մասնակիորեն ստուգել հայտարարագրերի բովանդակությունը, այդ թվում օգտվել համապատասխան տվյալների շտեմարաններից և կիրառել վարչական պատժամիջոցներ կամ գործն ուղղորդել իրավապահ մարմիններին՝ քրեական հանցանքի տարրեր նկատելու դեպքում: 2018թ. մայիսին տեղի ունեցած կառավարության փոփոխությունից հետո էթիկայի հանձնաժողովը ոչ ամբողջական կամ ուշ ներկայացված հայտարարագրերի համար տույժեր է կիրառել պաշտոնյաների նկատմամբ:

Օրենքի համաձայն տվյալների հավաստիության ամբողջական ստուգումը, ինչպես նաև կոռուպցիայի կանխմանն ուղղված այլ գործառույթների ապահովումը պետք է իրականացվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը, որն անկախ կոլեգիալ մարմին է, հաշվետու է խորհրդարանին և իրավասու է ունենալ 5 անդամ, որոնք նշանակվում են 6 տարի ժամկետով: Այն փոխարինում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին և օժտված է պաշտոնեական բարեվարքության խթանման, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և հակակոռուպցիոն իրազեկվածության ապահովման լայն իրավասություններով: Նոյեմբերի 19-ին Ազգային ժողովը գաղտնի քվեարկությամբ ընտրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հինգ անդամներին. անդամներից մեկի թեկնածությունն առաջադրվել էր կառավարության կողմից, մեկական թեկնածու առաջադրել էին երեք խորհրդարանական խմբակցություններից յուրաքանչյուրը և մեկին էլ առաջադրել էր Բարձրագույն դատական խորհուրդը: Հանձնաժողովի նախագահ դարձավ քաղաքացիական հասարակության մի առաջնորդ, որն հանձնաժողովում առաջադրվել էր ընդդիմադիր կուսակցության կողմից:

Ապօրինի հարստացումը քրեականացնող օրենքի շրջանակում բազմաթիվ պաշտոնյաներ՝ դատավորներ, պատգամավորներ և նրանց կանայք/ամուսինները հայտարարագրել են եկամուտների ու ակտիվների անբացատրելի մեծ գումարներ, այդ թվում՝ մեծ անձնական նվիրատվություններ և փոխառություններից ստացվող միջոցներ: 2018թ. մայիսին կառավարությունում տեղ գտած փոփոխություններից հետո իրավասու մարմինները սկսեցին մի քանի քննություններ՝ կապված հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների կամ անբացատրելի հարստության փաստերով:

Հոկտեմբերի 3-ին կառավարությունն ընդունեց հակակոռուպցիոն ռազմավարությունը, որն ի թիվս այլ գործողությունների նախատեսում է մինչև 2021թ. ստեղծել առանձին իրավապահ մարմին, որը կոչվելու է Հակակոռուպցիոն կոմիտե:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

2018թ. մայիսին կառավարության ղեկավար կազմի փոփոխությունների արդյունքում պետական պաշտոններում հայտնվեցին քաղաքացիական հասարակության որոշ գործիչներ: Մյուսները սակայն շարունակում էին իրենց հսկիչ գործառույթը՝ ուշադրության տակ պահելով կառավարության գործունեությունը: Մարդու իրավունքների ոլորտի տեղական և միջազգային խմբերն ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ քննելով և հրապարակելով մարդու իրավունքների ղեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կառավարության փոփոխությունը դիտարկում էին որպես առավել սերտ համագործակցության հնարավորություն: Պետական պաշտոնյաները հաճախ համագործակցում ու արձագանքում էին նրանց դիրքորոշումներին:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բոլոր մակարդակի պետական մարմինների չարաշահումներից պաշտպանելու համար: ՄԻՊ գրասենյակը բարելավել է մարզերի հետ կապն ու հաղորդակցումը և համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարզային կազմակերպությունների հետ: Տարվա ընթացքում ՄԻՊ գրասենյակը սկսեց ընտանեկան բռնության ղեպքերը հաղորդելուն ուղղված հանրային իրազեկման արշավ: Գրասենյակը շարունակում էր հայտնել, որ զգալիորեն ավելացել են քաղաքացիների բողոքներն ու այցերը, ինչը պայմանավորված է հանրության ակնկալիքներով ու կառույցի հանդեպ ունեցած վստահությամբ:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՏԻՔԻՆԳ

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություն. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար դատապարտվելիս սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ամուսնական բռնաբարության պարագայում գործում են բռնաբարության ընդհանուր հոդվածները: Ընտանեկան բռնության քրեական հետապնդումն իրականացվում է բռնության ընդհանուր հոդվածներով, իսկ պատիժը կախված է մեղադրանքից (սպանություն, մարմնական վնասվածքներ պատճառել, թեթև մարմնական վնասվածքներ հասցնել, բռնաբարություն և այլն): Իրավասու մարմինները ընտանեկան բռնության մասին պնդումների գերակշիռ մասի դեպքում արդյունավետ քննություն կամ քրեական հետապնդում չեն իրականացրել: Կանանց դեմ ուղղված ընտանեկան բռնությունը լայն տարածում ունի: Ըստ որոշ պաշտոնյաների քրեական օրենսգրքում ընտանեկան բռնության սահմանման բացակայությունը խոչընդոտել է ընտանեկան բռնության դեմ պայքարելու նրանց կարողություններին: Հոկտեմբերի 10-ին կառավարությունն հաստատեց ընտանեկան բռնության գործերի հաշվառման նպատակով կենտրոնացված տվյալների շտեմարան ստեղծելու մասին որոշումը:

Եղել են հաղորդումներ, որ այս դեպքերում ոստիկանությունը, հատկապես Երևանից դուրս, դժկամությամբ է միջոցներ ձեռնարկել ու չի խրախուսել կանանց կողմից բողոքների ներկայացումը: Ըստ որոշ ՀԿ-ների ներկայացուցիչների՝ բռնաբարության ենթարկվելու մասին պնդումներ ներկայացնող կանանց երբեմն հարցեր էին տալիս նախկին սեռական կյանքի մասին և նշանակում «կուսության փորձաքննություն»: Որոշ դեպքերում ոստիկանությունը ընթացքը կարճել է, եթե փորձաքննությամբ պարզվել է, որ կինը կույս չի եղել: Գործող օրենսդրության համաձայն ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել են որպես թեթև կամ միջին ծանրության գործեր, իսկ կառավարության կողմից չի ձևավորվել այս հանցանքներով զբաղվող բավարար քանակությամբ կին ոստիկանների և քննիչների կադրային բազա:

Hetq.am անկախ հարթակում հունիսին մի չեխ կնոջ նկատմամբ երկրում սեռական բռնության գործադրման մասին հրապարակումից հետո անկախ լրագրող Լյուսի Քոչարյանը սկսեց Ֆեյսբուքում տեղադրել սեռական բռնության ենթարկված անձանց անանուն պատմություններ, ինչն արագ տարածում ստացավ: Լ. Քոչարյանն անձնական հաղորդագրություններով ստանում էր գրություններ իրական օգտատերերից, որոնք նկարագրում էին թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում տեղ գտած սեռական ոտնձգության, բռնաբարության, անատակաբարո գործողությունների մասին

պատմություններ, որոնք վերաբերում էին ն՛ կանանց, ն՛ տղամարդկանց, և այդ պատմությունների գերակշիռ մասն էլ տեղի էր ունեցել, երբ տուժողները եղել էին դեռևս երեխա: Հուլիսի 6-ին ոստիկանությունը հայտնեց, որ կարող են վարույթ իրականացնել միայն այն հաղորդումներով, որտեղ կոնկրետ տվյալներ կան և երբ տուժողները կներկայանան ցուցմունք տալու:

Մայիսի 9-ին ոստիկանությունը հաղորդեց Շահումյան գյուղում Մարիամ Ասատրյանի մահվան մասին: Ըստ ոստիկանության հաղորդման Ասատրյանը, որն այդ ժամանակ հղի էր, մահացել էր ռետինե խողովակով ու պտուտակաբանալիով հասցված հարվածներից: Սպանության կասկածանքով ձերբակալված Հակոբ Օհանյանն Ասատրյանի գուգընկերն էր. լրատվամիջոցները գրում էին, որ նա երկու տարի բռնության է ենթարկել Ասատրյանին, որը երկու անգամ աջակցության համար դիմել է Կանանց աջակցման կենտրոնին՝ առաջին անգամ, երբ ծեծի ենթարկվելու հետևանքով կոտրվել էր նրա թևը և ստացել էր մի շարք մարմնական վնասվածքներ, իսկ երկրորդ անգամ, երբ կոտրված էին նրա երկու ձեռքերը և առկա էին այլ մարմնական վնասվածքներ: Նա հանցագործության մասին հաղորդում է տվել ոստիկանությունում և ապահովվել կացարանով: Օհանյանի ահաբեկումներից հետո նա բողոքը ետ է վերցրել, իսկ իրավապահ մարմինները կարճել են գործը:

Կանանց իրավունքների և հավասարության դիրքերից հանդես եկող ակտիվիստներն ու ՀԿ-ները հաճախ ատելության խոսքի թիրախում են հայտնվել և քննադատության են ենթարկվել «ավանդական հայկական ընտանիքը» ենթադրաբար խարխուլելու և «արևմտյան արժեքներ» տարածելու համար: Մի դեպքում կանանց իրավունքների ակտիվիստ և «Կանանց ռեսուրսային կենտրոնի» նախագահ Լարա Ահարոնյանը հայտնվեց առցանց ատելության արշավի թիրախում այն բանից հետո, երբ մարտի 8-ի առիթով գենդերային հավասարության մասին խոսքով հանդես եկավ քաղաքացիական հասարակության և խորհրդարանի համատեղ միջոցառման ընթացքում: Մարտի 11-ին նրա և նրա ընտանիքի նկատմամբ սպանության ու բռնաբարելու սպառնալիքներից հետո Ահարոնյանը դիմեց ոստիկանությանը՝ այդ սպառնալիքները հետաքննելու նպատակով: Ոստիկանությունը վարույթ սկսեց, սակայն այն կասեցվեց մինչև սպառնալիքներ ուղարկած անանուն օգտատերերի ինտերնետ պրոտոկոլների հասցեները պարզելուն վերաբերող միջազգային հարցման պատասխանի ստացումը: Մի այլ դեպքում «Կանանց ռեսուրսային կենտրոնի» Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի անձնակազմի նկատմամբ ևս եղան սպառնալիքներ «Իմ մարմինն անձնական է» գրքի մայիսի 4-ին նախատեսված շնորհանդեսից առաջ և հետո: Գիրքը նպատակ ուներ կրթել երեխաներին ու ծնողներին սեռական բռնության հարցերի շուրջ: Շնորհանդեսի օրն ազգայնականները դարանակալեցին միջոցառման անցկացման վայրը և ձվեր նետեցին կազմակերպիչների վրա: Ավելի ուշ նրանք ահաբեկում էին Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի անձնակազմին՝ զանգելով նրանց թե՛ զծի հեռախոսահամարին և սպառնալով սպանել, բռնաբարել և վառել նրանց, ինչի արդյունքում

Կենտրոնը ժամանակավորապես դադարեցրեց գործունեությունը: Միջադեպը դատապարտեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը՝ կառավարության միակ կին-նախարարը, ինչից հետո գենդերային ատելության խոսքի թիրախում հայտնվեց նաև նա: Ոստիկանությունը հրաժարվեց քրեական գործ հարուցել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

2018թ. հուլիսին գործողության մեջ մտավ 2017թ. ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը: Ըստ ՀԿ-ների կառավարությունը չունեի ռեսուրսներ օրենքի լիարժեք իրականացումն ապահովելու համար: Հոկտեմբերի 1-ին «Առավոտ» օրաթերթն ու aravot.am առցանց լրատվամիջոցը ներկայացրեցին ընտանեկան բռնության մի զոհի պատմությունը, որը համարում էր, որ իր կյանքը փրկվել է բռնարար ընտանիքից իրեն դուրս բերելուն ուղղված ոստիկանության գործողությունների շնորհիվ, իսկ նման միջամտությունը հնարավոր է դարձել միայն 2017թ. օրենքի հիման վրա:

Սեռական ոտնձգություններ. Չնայած օրենքն անդրադառնում է անառակաբար գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն այն կոնկրետ չի արգելում սեռական ոտնձգությունները: Դիտորդները կարծում են, որ աշխատավայրում և քաղաքական դաշտում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունենին և չէին ձեռնարկվում համարժեք միջոցներ կառավարության կողմից, որը չունեի լիարժեք գործող համընդգրկուն աշխատանքային տեսչություն կամ որևէ այլ հարթակ, ուր կարող էին ներկայացվել այս ոտնձգությունների մասին հաղորդումները:

Բնակչության վերահսկողության հարկադրանք. Չեն եղել հաղորդումներ հարկադրաբար հղիությունն ընդհատելու կամ ոչ կամավոր բեղմնականիման կիրառման մասին:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց էր և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում: Եղել են կանանց հանդեպ խտրականության վերաբերյալ հաղորդումներ մասնագիտության ու զբաղվածության հարցերի հետ կապված: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում՝ կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում:

Սոցիալտնտեսական գործոնները, կանանց կենցաղային պարտականությունները, ինչպես նաև առաջնորդման հմտություններ ձեռք բերելու հնարավորությունների բացակայությունը սահմանափակել է կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ: Կանանց համար նմանատիպ սահմանափակող ազդեցություն է ունեցել նաև երկրի քաղաքականության հիմք հանդիսացող ոչ պաշտոնական ցանցերի անհասանելիությունը, ուր գերիշխում են տղամարդիկ: Կանայք չունենին հովանավորներ ու ֆինանսական միջոցներ քաղաքական

կարիերա ձևավորելու համար: Նույնիսկ ընտրվելու դեպքում կին քաղաքական գործիչների տեսանելիությունը հանրային տիրույթում սահմանափակ էր:

Գենդերով պայմանավորված պտղի սեռի խտրական ընտրություն. Չնայած օրենսդրական փոփոխություններին, որոնք արգելում էին նման պրակտիկան ու դրան առնչվող հանրային իրազեկման արշավները, նորածինների մասին տվյալները շարունակում էին մատնացույց անել աղճատված հարաբերակցություն: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի ծնվելու պահին տղա-աղջիկ հարաբերակցությունը 2018թ. եղել է 112-100: Կանանց իրավունքների հարցերով զբաղվող խմբերը կարծում էին, որ պտղի սեռի ընտրության պրակտիկան երկրում առկա գենդերային անհավասարության առավել ընդգրկուն խնդրի հետ է կապված:

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից մեկից կամ երկուսից: Կա կենտրոնացված համակարգ, որի միջոցով գենդերացվում է ծննդյան մասին բժշկական տեղեկանք՝ գրեթե անհնար դարձնելով ծննդյան գրանցումից խուսափելը: Ծնունդների չգրանցման դեպքեր հիմնականում տեղ են գտել եզդիական և քրդական համայնքներում, որտեղ ընդունված են տնային ծնունդները:

Կրթություն. Թեպետ կրթությունն անվճար է և պարտադիր մինչև 12-րդ դասարան, սակայն գործնականում այն չի կիրառվել համընդհանուր կերպով: Կարիքավոր ընտանիքների և համայնքների երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների համար հասանելի չեն եղել վաղ տարիքի կրթական ծրագրերը՝ չնայած նախադպրոցական կրթության շրջանակն ընդլայնելու կառավարության ջանքերին: Ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների 2018թ. նախակրթարաններ հաճախելիության ցուցանիշը (մինչև 5 տարեկան երեխաներ) երկրում կազմել է 30,9 տոկոս, ընդ որում քաղաքային համայնքներում 36,6 տոկոս, իսկ գյուղական համայնքներում՝ 20,6 տոկոս: Թեպետ գյուղական բնակավայրերում նախակրթարանների հաճախելու ցուցանիշը փոքր-ինչ բարձրացել է, սակայն 400 հոգուց պակաս բնակչությամբ հեռավոր գյուղական համայնքներից շատերը չունենին նախակրթարաններ: Էթնիկ փոքրամասնական խմբերի, մասնավորապես՝ եզդիների, քրդերի ու մոլդականների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի հաճախելիության ցուցանիշը և բարձր է իններորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը մտահոգություն էր հայտնել տեղական համայնքում Սիրիայից, Իրաքից և Ուկրաինայից ժամանած փախստական երեխաների ինտեգրման վերաբերյալ, ինչը պայմանավորված է մշակութային ու լեզվական խոչընդոտները հաղթահարելու հարցում պատշաճ օժանդակության բացակայությամբ:

2018թ. «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտական ծրագիրը, որն իրականացվում էր ԲՀՀ-Հայաստան «Վաղ մանկության ծրագրի» և «Կրթությունը խթանող ցանցի» հետ համատեղ, վերհանել էր հաշմանդամություն ու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անցման հետ կապված դժվարությունները տարբեր կրթական մակարդակներում, ինչպես նաև տնից դպրոց և դպրոցից դեպի ինքնուրույն կյանք: Ըստ հետազոտողների «հաշմանդամություն ու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անցումը դեպի ավագ դպրոցի կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության միջավայր առավել դժվար է, հատկապես հեռավոր բնակավայրերում: Բազմաթիվ ավագ դպրոցներ ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ըստ հաղորդումների չեն կարողանում տարբերակներ առաջարկել հաշմանդամություն ու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ պայմանավորված սուղ ֆինանսական միջոցներով և մասնագետների բացակայությամբ, որոնք կարող են խորհրդատվություն ապահովել ուսուցիչներին ու սովորողներին: Սա նշանակում է, որ հաշմանդամություն ու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը սովորաբար 15 կամ 16 տարեկանում ավարտվում է և նրանք հնարավորություն չեն ունենում ձեռք բերել աշխատաշուկա մուտք գործելու համար անհրաժեշտ կոնկրետ հմտություններ, ինչը նրանց թույլ կտա ինքնուրույն ապրել»:

Մարտին ՄԻՊ գրասենյակը ներկայացրեց երկրի 121 դպրոցներում և 80 նախակրթարաններում ջրի ու սանիտարահիգիենիկ պայմանների մշտադիտարկման արդյունքները՝ մտահոգություն հայտնելով կրթօջախներում վատ սանիտարահիգիենիկ պայմանների ու դրանց գերակշիռ մասում հասանելի սանհանգույցների բացակայության վերաբերյալ:

Երեխաների նկատմամբ բռնություն. Ըստ դիտորդների երեխաների հանդեպ բռնությունների դեմ պայքարը համարվել է առաջնահերթ կառավարության կողմից և քայլեր են ձեռնարկվել դրա դեմ, չնայած չկան բավարար պաշտոնական տվյալներ երեխաների դեմ բռնության վերաբերյալ ու առկա են բացեր օրենսդրության մեջ և պրակտիկայում: Արդարադատության նախարարության Երեխաների հարցերով արդարադատության խորհուրդը հանդիսացել է բազմաշահառու հարթակ՝ քննարկելու և մշակելու բազմաոլորտային և համակարգված ազգային գործողությունների ծրագիր առաջիկա երեքից հինգ տարվա համար: Ընտանիքում բռնությունը կանխարգելելու մասին օրենքը վերաբերել է նաև ընտանեկան բռնության զոհ երեխաներին՝ ընտանեկան բռնությանն արձագանքելու նպատակով նախատեսելով համագործակցություն ուստիկանության ու սոցիալական ծառայությունների միջև: Օրենքի իրականացումը ուստիկանությունը սկսել է 2018թ. հունիսից՝ սկսելով պաշտպանության միջոցների կիրառմամբ, սակայն զոհերի ու բռնարարների համար հասանելի ծառայությունները բավարար չեին և չեին ապահովվում երկրի ողջ տարածքում՝ դրանով

սոցիալական ծառայությունների արձագանքը ընտանեկան բռնությունը դարձնելով ոչ արդյունավետ:

Այլ ներքին բարեփոխումների հետ մեկտեղ սեպտեմբերին Քննչական կոմիտեն ընդլայնեց մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հարցերով զբաղվող վարչության գործառույթների շրջանակը՝ ներառելով մարդկանց թրաֆիքինգի, երեխաների նկատմամբ սեռական բռնությունների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործերը: Ապրիլին Քննչական կոմիտեն սկսեց անչափահասների դեմ կատարված հնարավոր կիրքերի անցագործությունների մասին հաղորդումներ ստանալ Անհայտ կորած եւ շահագործվող երեխաների որոնման ազգային կենտրոնից, որի տվյալները հիմնվում են հայկական ինտերնետային հասցեների հիման վրա:

Մարտի 4-ին ՄԻՊ գրասենյակը հրապարակեց ութ հատուկ դպրոցներ և մեկ գիշերային խնամքի կենտրոն մշտադիտարկման այցերի արդյունքների նախնական արդյունքները՝ փաստելով, որ բացահայտվել են երեխաներ, որոնք այդ հաստատություններում գտնվել են առանց իրավական հիմքերի, եղել են բռնության դրսևորումներ երեխաների միջև և երեխաների նկատմամբ, աշխատանքային շահագործում և այլ խախտումներ: Կառավարության ապակենտրոնացման ծրագիրը միտված էր այս խնդրի լուծմանը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մրցութային հայտեր էր ընդունում երկրով մեկ 30 ցերեկային խնամքի կենտրոններ ստեղծելու նպատակով, որտեղ ընտանիք վերադարձած երեխաները կստանային անհրաժեշտ աջակցություն:

Վաղ և պարտադրված ամուսնություն. Օրենքով սահմանված ամուսնական նվազագույն տարիքը 18-ն է: Աղջիկների շրջանում վաղ ամուսնություններն առավել տարածված են եզդիական համայնքներում, սակայն կառավարությունը դրանց ծավալն արձանագրելուն կամ այդ պրակտիկան վերացնելուն ուղղված քայլեր չի ձեռնարկել:

Երեխաների սեռական շահագործում. Օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և սահմանում է 7-15 տարվա ազատազրկում այդ խախտումների համար դատապարտվելու դեպքում: Մանկական պոռնկագրության համար դատապարտվելիս նախատեսվում է մինչև յոթ տարվա ազատազրկում: Սեռական համաձայնության նվազագույն տարիք է համարվում 16 տարին:

Թեպետ պաշտոնական վիճակագրությամբ հիշատակվում են երեխաների շահագործման ու վաճառքի սակավաթիվ դեպքեր, սակայն ըստ ՀԿ-ների կան բազմաթիվ չբացահայտված և չհաղորդված դեպքեր, ինչը պայմանավորված է օրենսդրության, ուսուցման, իրազեկման բարձրացման, բացահայտման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված բացերով:

Հաստատություններում գտնվող երեխաներ. 2017թ. ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարվեցին՝ հնարավորություն տալով ձևավորել ընտանեկան խնամքի տարբերակներ հաստատություններում գտնվող երեխաների համար, մասնավորապես՝

դիվերսիֆիկացվեց խնամատար ընտանիքի ինստիտուտը և բարելավվեցին որդեգրման վերաբերյալ դրույթները. Փոփոխությունները գործողության մեջ մտան տարվա կեսին և արդյունքում խնամատար ընտանիքներին ուղղվող պետական ֆինանսավորումը քառապատկվեց: Շարունակվում էր կյանքի դժվարին հանգամանքներում հայտնված և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմավորումը: Բացառությամբ հաշմանդամություն ունեցող երեխաների, շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների թիվը շարունակում էր նվազել:

Կառավարությունը միջազգային կազմակերպությունների և այլ գործընկերների օժանդակությամբ նվազեցրեց շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների թիվը՝ 2018թ. հունվարի 2.900-ը կրճատելով մինչև 2.400 երեխա 2018թ. դեկտեմբերին: Երեխաների գերակշիռ մասը վերադարձվեցին կենսաբանական ընտանիքներին կամ մոտ ազգականներին, իսկ փոքրաթիվ երեխաների համար էլ ապահովվեց այլընտրանքային ընտանիք կամ համայնքահենք տարբերակ: Կառավարությունը շարունակում էր աջակցել խնամատար ծառայությունների զարգացմանը: 2018թ. քառակի ավելացվեց խնամատար ընտանիքի ֆինանսավորումը և մասամբ դրանով էր պայմանավորված պետության կողմից ֆինանսավորվող խնամատար ընտանիքների թվի ավելացումը. ավելի քան տասը տարի այս թիվը կայուն էր, սակայն այն ավելացավ՝ 25-ից դառնալով 45 (օգոստոսի դրությամբ):

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Տես Օնոդների կողմից երեխաների միջազգային առևանգումների վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը՝
<https://travel.state.gov/content/travel/en/International-Parental-Child-Abduction/for-providers/legal-reports-and-data/reported-cases.html>:

Նոյեմբերի 14-ին Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդում տարածեց, որ բացահայտել է կազմակերպված հանցավորության մի շղթա, որն զբաղվել է անօրինական որդեգրումներով, ինչ արդյունքում ավելի քան 30 երեխա է վաճառվել օտարերկրացիներին: Ըստ մամուլի հաղորդագրության կասկածյալները դիմել են շանտաժի, հարկադրանքի և խաբեության, որպեսզի սոցիալապես անապահով վիճակում գտնվող հղիները երեխան մինչև վերջ կրեն ու հրաժարվեն նորածնից: Որոշ դեպքերում մայրերին ասել են, որ երեխան ծնվել է լուրջ առողջական խնդիրներով կամ մահացած: Խուսիքը երեխաներին նախ տեղավորել է մանկատներում, ապա կեղծելով փաստաթղթերը, հնարավոր է դարձրել օտարերկրյա որդեգրումը (տեղի օրենսդրությամբ նախապատվությունը տրվում է որդեգրմանը երկրի ներսում): Տարվա վերջի դրությամբ քննությունը ընթացքի մեջ էր:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Դեկտեմբերի սկզբի դրությամբ տարվա ընթացքում հակասեմական գործողությունների մասին հաղորդումներ չէին եղել, չնայած կային որոշ հակասեմական մեկնաբանություններ սոցիալական հարթակներում՝ ուղղված կառավարության ներկայացուցիչներին ու ակտիվիստներին: Կառավարությունը չի դատապարտել այս հակասեմական մեկնաբանությունները:

Մարդկանց թրաֆիկինգ

Տես Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը <https://www.state.gov/trafficking-in-persons-report/> էջում:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, սակայն խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են եղել հասանելի, անգամ եթե դրանք նորակառույց են կամ նորոգված են: Բազմաթիվ հասարակական շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ եղել են ֆիզիկապես ոչ հասանելի: Այս անհասանելիության հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը, քանի որ ընտրությունների ժամական այս շենքերը հաճախ ծառայում են որպես ընտրական տեղամասեր:

Չնայած հանրակրթության մասին օրենքը սահմանում է, որ մինչև 2025թ. հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընդհանուր կրթությունից անցում է կատարվելու դեպի ներառական կրթություն և չնայած ներառական կրթության միտումների մեծացմանը՝ տեղում գործող պրակտիկան շարունակում էր մնալ մասնատված և խտրական և չէր հանգեցնում կրթական համակարգի ու սոցիալական նորմերի լայնամասշտաբ և կայուն փոփոխությունների: Շատ ՀԿ-ներ շարունակում էին հայտնել, որ դպրոցներում ապահովված չէ ֆիզիկական հասանելիությունը, ուսումնական նյութերի հասանելիությունը և քիչ ջանքեր են գործադրվում ներառական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ողջամիտ հարմարություններ ապահովելու ուղղությամբ: Ֆինանսավորման վերանայված բանաձևը նախատեսում է ուսուցչի օգնականի աշխատավարձը, բայց չի ապահովում ողջամիտ հարմարություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ներառական

ուսուցման վերաբերյալ ուսուցիչների վերապատրաստումները հիմնականում ֆինանսավորվում էին դոնորների կողմից և չէին կարող մշտապես փոխել ուսուցչի գործելաճր և ներառված չէին ուսուցիչների վերապատրաստման պետական քաղաքականության մեջ: Արդյունքում գերակշիռ դեպքերում հաշմանդամություն ունեցող երեխաները ֆիզիկապես ներկա էին ներառական դասարաններում, բայց ապահովված չէր այն գործիքակազմը, որը նրանց թույլ կտար ուսումնական գործընթացին լիարժեք մասնակցել:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող անձիք խտրականության են բախվել կյանքի բոլոր ոլորտներում՝ այդ թվում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնողական, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման հասանելիության հարցերում: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար: Առավել մեծ է եղել խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով:

Ստանդարտներից ցածր էին նաև առավել լուրջ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոցային, հաստատություններում խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: 2018թ. քաղաքական անցման շրջանից սկսած նախարարությունում կատարվել են ներքին վերակազմավորումներ՝ օպտիմալացնելու ռեսուրսների օգտագործումը և առավել արդյունավետ միջոցներ ձեռնարկելու հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի կարիքների ուղղությամբ: Դեկտեմբերի կեսերին գործընթացը դեռ ավարտին չէր հասցվել, սակայն բյուջետային վերահասկացումների արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված ռեսուրսներն ավելացել էին: Օրինակ՝ օգոստոսի 15-ին նախարարությունը հայտնեց, որ կարողացել է ձեռք բերել հավելյալ 1.253 միավոր սարքավորում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Տարվա ընթացքում ֆիզիկական հասանելիության խնդիրները քննարկվում էին նաև լայն հանրային բանավեճի առարկա դարձած խնդիրների համատեքստում . օրինակ՝ մայրաքաղաքի նոր տրանսպորտային համակարգի ձևավորման հարցում:

Տարվա ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի և Առողջապահության նախարարությունները և «Բարի մամա» ՀԿ-ը հուշագիր ստորագրեցին հաշմանդամություն ունեցող երեխաներին լքելը և հաստատություններում տեղավորելը կանխելու և ընտանիքում հասակ առնելու երեխայի իրավունքն իրացնելու շուրջ համագործակցության վերաբերյալ՝ նպատակ ունենալով ամրապնդել սոցիալական ծառայության մասնագետների

(ներհատուցներ, բուժքույրեր, սոցիալական աշխատողներ և խնամակալներ և այլն) և հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը տանն ապահովելու ծնողների կարողությունները: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցել է գործընթացին՝ կարողությունների զարգացման և իրազեկման բարձրացման միջոցով:

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, խտրականություն և այլ չարաշահումներ

Հակախտրականական օրենսդրական դրույթները՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, ԼԳԲՏԻ անձանց համար պաշտպանություն չէին ապահովում: Չկային ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարող օրենքներ կամ այլ քրեական դատական մեխանիզմներ, որոնք կօգնեին ԼԳԲՏԻ համայնքի անդամների դեմ գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելիս: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել կյանքի բոլոր բնագավառներում՝ զբաղվածություն, բնակապահովում, ընտանեկան հարաբերություններ, կրթություն ու առողջապահական ծառայությունների հասանելիություն: Հակա-ԼԳԲՏԻ տրամադրությունները և կոչերը սրվում էին քաղաքական ակտիվության շրջաններում: Բազմաթիվ քաղաքական և հասարակական գործիչներ, հատկապես նախորդ իշխանության աջակիցները, օգտագործում էին հակա-ԼԳԲՏԻ հռետորաբանությունը՝ հաճախ ԼԳԲՏԻ անձանց ներկայացնելով որպես «ազգային անվտանգության սպառնալիք»: Տրանսգենդեր անձինք հատկապես խոցելի էին ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների ու հալածանքների տեսանկյունից:

Նոյեմբեր ամսվա ընթացքում, երբ հայտնի դարձավ, որ կառավարությունը համաֆինանսավորել է ծանրամարտի չեմպիոն տրանսգենդեր Մել Դալուզյանի կյանքի մասին պատմող վավերագրական ֆիլմի պատրաստմանը, Նիդեռլանդներում բնակվող Դալուզյանը և կառավարությունը հայտնվեցին լրատվականների հարձակման թիրախում: Նոյեմբերի 13-ին Ազգային ժողովում ելույթ ունենալիս վարչապետ Նիկոլ Փաշինյանը դատապարտեց Դալուզյանի դեմ ուղղված ատելության հռետորաբանությունը:

Տարվա առաջին կեսին մարդու իրավունքների ՓԻՆԲ ՀԿ-ն արձանագրել է սեռական կողմնորոշման և գենդերային բռնության հիմքով խտրականության 24 դեպք, մինչդեռ 2018թ. ընթացքում գրանցվել էր այդպիսի 25 դեպք: Տարվա առաջին կեսին ՓԻՆԲ-ը նաև արձանագրել էր բռնության և սպառնալիքների յոթ դեպք:

Նոյեմբերի 2-ին նախկին կառավարության աջակիցները և ավանդական արժեքների աջակիցները Երևանի կենտրոնում հակա-ԼԳԲՏԻ անվանարկումներով խաթարեցին բացօթյա ներկայացումը՝ այն անվանելով ֆեմինիստական, սատանիստական և այլասերված (տես՝ Այլ հասարակական բռնություն և խտրականություն, Մաս 6):

2018թ. «Իրավունքի կողմ» ՀԿ-ը կատարեց առաջին հետազոտությունը տրանսգենդեր անձանց դեմ ուղղված ատելության հանցանքների վերաբերյալ՝ բացահայտելով ատելությամբ պայմանավորված բռնության դեպքերը 2016-17թթ. 12-ամսյա ժամանակահատվածի համար: Միջադեպերի գերակշիռ մասը տեղի է ունեցել հանրային վայրերում, հիմնականում՝ գիշերվա ժամերին: Տուժողները նշում էին, որ իրենք ավելի հակված էին օգնության համար դիմել ընկերներին կամ ԼԳԲՏԻ ՀԿ-ներին, քան տուժողների օգնության խմբերին կամ բժիշկներին: Հարցվածներից միայն մի քանիսն են մատնանշել, որ ոստիկանությունը պատրաստակամորեն աջակցել է: Ըստ մարդու իրավունքների խմբերի տրանսգենդեր կանայք բժշկական խորհրդատվության ու օգնության հասանելիության հետ կապված բախվել են բազմաթիվ խոչընդոտների՝ պայմանավորված բժիշկների շրջանում իրազեկության բացակայությունից մինչև բացահայտ խտրականություն:

Ապրիլի 5-ին երկրում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման հետ կապված խորհրդարանում կազմակերպված հանրային լսումների ժամանակ «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ և տրանսգենդեր ակտիվիստ Լիլիթ Մարտիրոսյանը խոսեց տրանսգենդեր անձանց հանդեպ տեղ գտնող ատելության հանցանքների մասին: Լսումների կազմակերպիչ, ԲՀԿ-ական պատգամավոր և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանն արձագանքելով ելույթին ասաց, որ այն օրակարգից դուրս է և խնդրեց Մարտիրոսյանին դուրս գալ դահլիճից: Մարտիրոսյանին իր ներկայությամբ խորհրդարանը «պղծել» թույլ տալու համար հարձակումների թիրախում հայտնված Զոհրաբյանը հայտարարեց, որ այդ ելույթը սադրանք էր և ինքը դա համարում է մեծ վիրավորանք խորհրդականների նկատմամբ: Հաջորդ օրերին նման և էլ ավելի կոշտ հումֆորիկ գնահատականներ հնչեցրին նաև այլ պատգամավորներ: Օրինակ՝ ԲՀԿ-ական պատգամավոր Վարդան Ղուկասյանն ասում էր, որ այդպիսի մարդկանց պետք է վառել, իսկ ԲՀԿ-ական մեկ այլ պատգամավոր Գևորգ Պետրոսյանը հրապարակավ հանձն առավ պայքարել «սեռական շեղումներով» անձանց դեմ: Սոցիալական հարթակներում որոշ օգտատերեր կոչ էին անում ֆիզիկապես բնաջնջել ԼԳԲՏԻ անձանց, իսկ խորհրդարանի շենքի մոտ փոքր բողոքի ցույցեր էին ընթանում: Երբ Ֆեյսբուքում մեկը ներկայացրեց Մարտիրոսյանի հասցեն, նա ստիպված էր իր տան մոտ տեղի ունեցող ակցիաների պատճառով օրերով թաքնվել իր բնակարանում: Նա պաշտպանության համար դիմել է ոստիկանությանը և ապահովվել է պաշտպանությամբ ու նշում էր, որ ոստիկանությունը պատրաստակամորեն աջակցել է:

2018թ. խուլիգանության հատկանիշներով (դատապարտման դեպքում նախատեսվում է մինչև յոթ տարվա ազատազրկում) տրանսգենդեր անձի դեմ հարուցված գործը դեռ ընթացքի մեջ էր: Չնայած առողջական վիճակի վատացմանը՝ տրանսգենդեր անձը մնում էր նախնական կալանքի տակ: Օգոստոսի 1-ին ընդհանուր իրավասության դատարանի դատավորը մերժեց կալանքը փոխելու մասին միջնորդությունը: Ձերբակալության ժամանակ ամբաստանյալի

նկատմամբ բռնության մեղադրանքով ոստիկանության դեմ հարուցված քրեական գործը կարճվեց՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Տարվա ընթացքում ՓԻՆԲ-ը բողոքարկեց 2018թ. դեկտեմբերին դատարանի ընդունած որոշումը՝ 2018թ. օգոստոսին Շուռնուխ գյուղում ԼԳԲՏԻ ակտիվիստների վրա հարձակում գործած անձանց դեմ հարուցված գործը փակելու մասին: Փետրվարին Սյունիքի ընդհանուր իրավասության դատարանը բավարարեց բողոքը, իսկ հոկտեմբերի 25-ին դատախազությունը գործը հետագա քննության նպատակով ետ ուղարկեց քննչական կոմիտեի մարզային գրասենյակ:

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից: Ազատումը սակայն հիմնավորվում է հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում: Զինված ուժերում ծառայող նույնասեռական տղամարդկանց հանդեպ եղել են ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ, ինչպես նաև շանտաժ:

Մարտի 25-ին Epress.am-ում ներկայացվեց Ա.Ա.-ի պատմությունը սեռական կողմնորոշման հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու մասին: Պահանջվել էր պարտադիր բժշկական ստուգում հոգեբուժական հիվանդանոցում, որտեղ չէր պահպանվել անձնական տեղեկությունների գաղտնիությունը, իսկ գիտական փորձաքննության ժամանակ տեղ էր գտել նաև ֆիզիկական բռնություն, և հանձնաժողովի նախագահ Հենրիկ Մուրադյանը վիրավորական խոսքեր էր ասել ու հարվածել Ա.Ա.-ի դեմքին՝ 15-հոգանոց հանձնաժողովի անդամների վիրավորանքների ներքո: Ա.Ա.-ի պաշտոնական ախտորոշումը հոգեկան հիվանդությունն էր: Դիտորդները նկատում էին, որ այս դեպքերում որպես զինվորական ծառայությունից ազատելու հիմք նշվող ախտորոշման հոգեկան ըստ էության հոգեկան հիվանդությունների են վերաբերում, օրինակ՝ շիզոֆրենիա կամ գլխուղեղի օրգանական ախտահարում, որոնք զինվորական ծառայությունից ազատելուց զատ նախատեսում են նաև մի շարք այլ իրավական սահմանափակումներ:

ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի սոցիալական խարանդ

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր) և թմրամոլների նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից: Այսօրինակ խտրականությունն առավելապես նկատվում է, երբ ՄԻԱՎ-դրական անձինք փորձում են բուժօգնություն ստանալ: Օգոստոսի 14-ին տեղական «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի կողմից ներկայացվեց

մի դեպք, երբ Շիրակի մարզի կլինիկաներից մեկում հրաժարվել են հաշվառման վերցնել ՄԻԱՎ-դրական հղի կնոջը: 2018թ. հունիսի ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքի հարցերով զեկուցողի հունիսին ներկայացրած զեկույցի համաձայն խարանն ու խտրականությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց համար բուժման ու բուժժառայություններ ստանալու խոշորագույն խոչընդոտն են առողջապահական միջավայրում: Ըստ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով կանայք կրկնակի խտրականության են բախվում և նրանց համար ընտանիքում ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվելու ավելի մեծ ռիսկ կա:

Այլ հասարակական բռնություն և խտրականություն

Նոյեմբերի 2-ին նախկին կառավարության աջակիցները և ավանդական արժեքների աջակիցները Երևանի կենտրոնում հակա-ԼԳԲՏԻ անվանարկումներով խաթարեցին Երևանի կենտրոնում կազմակերպվող բացօթյա ներկայացումը, որի նպատակն էր մարտահրավեր նետել կնոջ պահվածքի վերաբերյալ հանրային ընկալմանը: Ծրագիրն իրականացվում էր Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ և առկա էր հանրային վայրում անցկացնելու համար անհրաժեշտ թույլտվությունը քաղաքային իշխանություններից: Ակտիվիստները խաթարել են թե՛ նոյեմբերի 1-ի հիմնական փորձը, թե՛ հաջորդ օրը նախատեսվող ներկայացումը: Ներկայացումը նրանք անվանեցին ֆեմինիստական, սատանիստական և այլասերված, անվանարկեցին ԼԳԲՏԻ անձանց, հուսանքազրկեցին ներկայացման սարքավորումները, բարձր հնչեցրին ավանդական երաժշտություն ու հրմշտեցին պարողներին: Ոստիկանությունն ակտիվիստներից մեկին բերման ենթարկեց:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ոչ քաղաքացիական ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը սահմանում է, որ գործադուլ սկսելուց առնվազն 7 օր առաջ պետք է այդ մասին ծանուցել գործատուին և մինչ այդ պետք է պարտադիր հաշտեցման գործընթաց լինի, ինչպես

նան աշխատողների 2/3-ի համաձայնությունը՝ արտահայտված գաղտնի քվեարկության միջոցով: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

2018թ. գործողության մեջ մտավ կառավարության կառուցվածքի մասին օրենքը, որով Առողջապահական տեսչական մարմինը, որը զբաղվում էր աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառում առաջադրվող պահանջների իրականացման ապահովմամբ, դարձավ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (ԱՍՏՄ): Այդ շրջանում ԱՍՏՄ-ն ուներ աշխատողների առողջության և անվտանգության տեսչական ստուգումներ անցկացնելու սահմանափակ իրավասություններ: Աշխատանքային իրավունքների վերահսկման ու պաշտպանության նպատակով տեսչական ստուգումներ իրականացնող այլ պետական մարմիններ չկային: Կառավարությունն արդյունավետորեն չի կիրառել միավորումներ կազմելու և կոլեկտիվ պայմանագրերի մասին օրենքները և չի սահմանել, թե որ կառույցն է այդ օրենքների կիրարկման համար պատասխանատու: Դեկտեմբերի 4-ին Ազգային ժողովը փոփոխություն կատարեց աշխատանքային օրենսգրքում, որով վերականգնվեց ԱՍՏՄ-ի պետական վերահսկողության գործառույթն ու տույժերի կիրառումն աշխատանքային օրենսդրության խախտումներ համար, ինչը գործողության մեջ կմտնի 2021թ. հուլիսից:

Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Փորձագետները նշում էին, որ թեպետ Սահմանադրությամբ ամրագրված է գործադուլների իրավունքը, սակայն այն դժվար է իրացնել, քանի որ առկա են հաշտեցման ու քվեարկելու պահանջներ: «Թավշյա հեղափոխությունից» հետո արհեստակցական միություններ ձևավորվեցին կրթության ու հետազոտական հաստատությունների ոլորտներում:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են և քրեորեն պատժելի են համարվում հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները, սակայն օրենքում «հարկադիր աշխատանքի» սահմանում չի տրվում: Թեպետ կառավարությունն արդյունավետ կերպով քրեական հետապնդում է իրականացրել աշխատանքային թրաֆիքինգի գործերով, սակայն ռեսուրսները, ստուգումներն ու լուծումները համարժեք չէին, որպեսզի բացահայտվեին հարկադիր աշխատանքի դեպքերի ողջ շրջանակը՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի ոլորտում տեսչական ստուգումների արդյունավետ մեխանիզմի բացակայությամբ: Աշխատանքային թրաֆիքինգի

համար նախատեսված է բավարար խիստ պատիժ՝ նպատակ ունենալով կանխել նման խախտումները:

Տես նաև Մարդկանց թրաֆիքինգի մասին Պետքարտուղարության զեկույցը՝ <https://www.state.gov/trafficking-in-persons-report/>:

գ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Օրենքն արգելում է երեխայի վատթարագույն աշխատանքի բոլոր ձևերը: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 14 տարին չլրացած երեխաներին օրենքը թույլատրում է ընդգրկվել ստեղծագործական աշխատանքում՝ կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված է 24-ժամյա առավելագույն շաբաթական աշխատաժամանակ, իսկ 16-18 տարեկանների համար՝ 36 ժամ: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինների կողմից օրենքների արդյունավետ կիրառումը չի ապահովվել: Չկար պատժամիջոցների բավարար մակարդակ, որը կապահովեր այս պահանջների կատարումը: Աշխատավայրերում պետական մակարդակով տեսչական ստուգումների անցկացման բացակայությունը խոչընդոտում է երեխայի աշխատանքի մասին դրույթների կիրարկմանը:

Ըստ Վիճակագրական կոմիտեի և Աշխատանքի միջազգային կազմակերպության պատրաստած «Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015թ.» վերլուծական զեկույցի՝ 5-17 տարեկան երեխաների 11.6 տոկոսն աշխատում են: Մեծ մասը ներգրավված են գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում, իսկ մյուսներն աշխատել են առևտրի, նորոգման, փոխադրումների, պահեստավորման, կացության և հանրային սննդի ծառայությունների ոլորտում: Երեխաները զբաղվել են նաև շարժիչային վառելիքի, շինանյութի, դեղորայքի առևտրով, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներով: Հետազոտության տվյալների համաձայն զբաղված է եղել 39.300 երեխա, որոնցից 31.200-ը ներգրավված են եղել վնասակար աշխատանքում, մասնավորապես՝ վնասակար ոլորտներում (400 երեխա), վնասակար զբաղմունքներում (600 երեխա), երկար աշխատաժամերով աշխատանքներում (1.200 երեխա), ծանր բեռների փոխադրում մեծ հեռավորությունների վրա (17.200 երեխա) և վնասակար աշխատանքի այլ ձևերում (23.600 երեխա):

Տես նաև ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները՝ <https://www.dol.gov/agencies/ilab/resources/reports/child-labor/findings> էջում:

դ) Աշխատանքային կամ մասնագիտական խտրականություն

Սահմանադրությամբ ու աշխատանքային օրենսգրքով արգելվում է խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այլ օրենքներով ու կանոնակարգերով արգելվում է կոնկրետ աշխատանքային և մասնագիտական խտրականությունն ըստ սեռի: Կառավարությունն արդյունավետորեն չի ապահովել օրենսդրության կիրառումը: Չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ ապահովելու այս կանոնակարգերի կիրառումը և եղել են աշխատանքային ու մասնագիտական խտրականության դրսևորումներ պայմանավորված սեռով, տարիքով, հաշմանդամության առկայությամբ, սեռական կողմնորոշմամբ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հանգամանքով և կրոնական պատկանելությամբ, թեև վիճակագրություն այսօրինակ խտրականության ծավալների վերաբերյալ չի եղել: Գործող վարչական պատժամիջոցները բավարար չեին երևույթը կանխելու համար:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն այն հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կատարած «Գենդերային հավասարության անհամապատասխանությունների ախտորոշիչ ուսումնասիրության» համաձայն, որը հրապարակվեց 2016թ. մարտին, կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի միջև անհամապատասխանությունը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում կազմում էր շուրջ 36 տոկոս: Արժույթի միջազգային հիմնադրամը նշում էր, որ աշխատավարձերի գենդերային տարբերությունը երկրում շեշտակի մեծ էր: 2016թ. Համաշխարհային բանկի կողմից ներկայացրած տվյալների համաձայն միջնակարգ կրթություն ունեցող կանանց մեկ երկրորդը և բարձրագույն կրթություն ունեցող կանանց մեկ երրորդը ներգրավված չեն վարձատրվող որևէ աշխատանքում: Համաշխարհային բանկի 2017թ. «Կանանց համար հավասար պայմանների ապահովում բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում» ուսումնասիրության համաձայն «երկրում կանանց և տղամարդկանց հավասարությանը

խոչընդոտող ամենից նշանակալի գործոնն ազգային մշակույթում առկա կարծրատիպերն են՝ կանանց ընտանեկան պարտականությունների և այն մասին, թե ինչ տեսակի աշխատանք պետք է նրանք կատարեն»: Կանայք նաև մեծամասնություն էին կազմում գրանցված գործազուրկների շրջանում, իսկ աշխատանք գտնելու համար կանանցից ավելի երկար ժամանակ էր պահանջվում:

Շատ գործատուներ, ըստ հաղորդումների, խտրականություն են դրսևորում ըստ տարիքի և սեռի՝ հաճախակի թափուր տեղերի համար առաջադրելով պահանջներ սեռի, տարիքի ու արտաքին տվյալների վերաբերյալ: Չնայած որ խտրականության այս դրսևորումը բավական լայն տարածում ուներ, սակայն չկային հուսալի հետազոտություններ և իշխանությունները ոչ մի գործողություն չէին ձեռնարկում այն մեղմելու համար: Աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ իրազեկության ցածր մակարդակը և դրա մասշտաբները մատնացույց անող համակողմանի հաղորդումներ չկային, սակայն լրատվական հրապարակումները փաստում էին, որ այդ ոտնձգությունները սովորական երևույթ էին: Լայն տարածում ունեին թափուր տեղերի մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում էին երիտասարդ, բարեսեռ կանայք: Գործազուրկ դարձած աշխատողները, հատկապես՝ կանայք, 40 տարեկանից հետո շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել: ԼԳՖՏԻ անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հղի կանայք զբաղվածության հարցերում նույնպես հանդիպել են խտրականության: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականություն է եղել պետական հիմնարկներում աշխատելու հարցում:

ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Ամսական նվազագույն աշխատավարձն աղքատության շեմից բարձր է: Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր վճարովի արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ:

Համապատասխան մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել ո՛չ օրինական, ո՛չ սովերային ոլորտներում: Ըստ իրավաբանների աշխատողների իրավունքները շարունակել են մնալ չպաշտպանված՝ պայմանավորված աշխատանքային տեսչական ստուգումների կայուն ռեժիմի և անկախ արհմիությունների բացակայությամբ: Վարչական դատարանները պարտավոր են աշխատանքային հարցերին առնչվող գործերով որոշումները կայացնել եռամսյա ժամկետում, սակայն իրենց իրավունքների վերականգնման համար սակավաթիվ աշխատողներ են ընտրում դատական

ճանապարհը՝ պայմանավորված իրավական ծախսերով, հայց ներկայացնելու գործընթացի խրթինությամբ և դատական համակարգի նկատմամբ անվստահությամբ: Պարզ չէր արդյոք գերծանրաբեռնված դատարանները կկարողանային ապահովել վեճի լուծման եռամսյա ժամկետը, եթե այդպիսի հայցեր ներկայացվեին:

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ ծառայությունների ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողներին ընդունել են 10-30 օր չձևակերպված ոչ վճարովի «փորձաշրջանով»: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը: Ըստ 2018թ. տեղական «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» ՀԿ-ի անցկացրած հետազոտության համաձայն 800 հարցվածներից փոքր բիզնեսում զբաղվածներից պայմանագրեր ունեին միայն 47,7 տոկոսը (հարցվածների 20 տոկոսը): Հետազոտությունը նաև բացահայտեց վճարովի ամենամյա արձակուրդի օգտագործման ու արտաժամյա աշխատանքի վարձատրության հետ կապված խնդիրներ:

Որոշ աշխարհագրորեն աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները հաճախ օգտվելով այլ աշխատանք չլինելու հանգամանքից չեն ապահովել համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմաններ և քայլեր չեն ձեռնարկել բնապահպանական մտահոգությունների հետ կապված: 2017թ. դրությամբ բոլոր աշխատողների շուրջ կեսն աշխատանք է գտել ստվերային ոլորտում: Ըստ պաշտոնական վիճակագրության կառավարության հակակոռուպցիոն քայլերն ու հարկային մարմինների ակտիվ ջանքերը հանգեցրել են պաշտոնապես գրանցված աշխատողների թվի նկատելի ավելացման երկրում:

2018թ. նոյեմբերին «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի կողմից ներկայացվեցին հանրակրթական դպրոցների ուսուցիչների աշխատանքային իրավունքների մասին 2017թ. հետազոտության արդյունքները, որոնք մատնանշում էին աշխատանքային պայմանների հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների ապահովման մասով: Որոշ ուսուցիչներ նշում էին, որ պաշտպանված չեն հոգեբանական ճնշումներից, որ գործադրվում են տնօրինության ու ծանոթությամբ ընդունված ուսուցիչների կողմից: Ուսուցիչների գրեթե կեսը ստիպված են եղել դպրոցի համար աշակերտներ ներգրավել, իսկ որոշները՝ ապահովել աշակերտների մասնակցությունը քաղաքական միջոցառումներին կամ հավաքներին: Ըստ ուսուցիչների իրենց դպրոցներում առավել քիչ պաշտպանված են կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչ, ԼԳԲՏԻ և նախկին դատապարտյալ ուսուցիչները: Եղել են մի շարք հաղորդումներ, որ հեղափոխությունից հետո ուսուցիչները, որոնք բարձրաձայնել են

տնօրենների կոռուպցիոն քայլերի մասին մտահոգություններ, ենթարկվել են հաշվեհարդարի և հեռացվել աշխատանքից:

Վերջին մի քանի տարիներին շարունակաբար հաղորդումներ էին ստացվում Երևան քաղաքի աղբահանությամբ զբաղվող կազմակերպության կողմից թույլ տված աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ, սակայն պատկան մարմինների կողմից տույժեր ընկերության նկատմամբ չէին կիրառվում: Շատ ոլորտներում անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին, իսկ պաշտոնական տեղեկատվության համաձայն տարվա ընթացքում գրանցվել է մահվան ելքով 16 աշխատանքային պատահար: Հաշվի առնելով երկրում տիրող գործազրկության բարձր մակարդակը՝ աշխատողները սովորաբար չեն թողնում այնպիսի աշխատանքները, որտեղ առողջության կամ անվտանգության համար վտանգավոր իրավիճակներ կան: Նման իրավիճակներում համապատասխան մարմինների կողմից աշխատողներին պաշտպանություն չի ապահովվում, իսկ վերջիններս էլ սովորաբար իրենց իրավունքների խախտումների մասին հաղորդումներ չեն ներկայացնում:

Հուլիսի 2-ին Ագարակի պղնձամոլիբդենային հանքում բողոքի ակցիաներ սկսվեցին՝ պահանջելով արտաժամյա աշխատանքի և հատկապես դժվարին ու վտանգավոր աշխատանքի դիմաց փոխհատուցում, աշխատանքային պայմանների բարելավում և ապահով ու անվտանգ աշխատանքային միջավայր: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների դժգոհությունների ուղղությամբ եկար ժամանակ ոչինչ չէր արվել, իսկ հուլիսի բողոքի ակցիաների համար պատրվակ հանդիսացավ այն, որ հանքի ղեկավարությունը հրաժարվեց միջոցներ ձեռք առնել կյանքի համար վտանգավոր քարաթափումների ուղղությամբ և պահանջեց հանքափորներից շարունակել աշխատանքն իրենց կյանքին սպառնացող վտանգի պայմաններում: Հանքի ղեկավարությունը պնդում էր, որ գործադուլներն անօրինական են և պահանջում էր բողոքի կազմակերպիչներից բացատրագրեր ներկայացնել աշխատանքից բացակայելու վերաբերյալ: